

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

Երևան
Հեղինակային հրատարակություն
2017

ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀՐԱԺԱՐՎԵՑ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

Երևան
Հեղինակային հրատարակություն
2017

ՀՏԴ 340
ԳՄԴ 67.0
Ղ 301

Ղամբարյան Ա.

Ղ301 Ինչո՞ւ Հայ ժողովուրդը հրաժարվեց արդարադատությանը մասնակցելու իրավունքից/ Ա. Ղամբարյան.-Եր., Հեղ. Հրատ., 2017. - 51 էջ:

Աշխատանքում քննարկվում է Հայաստանում երդվյալ ատենակալների ինստիտուտից հրաժարվելու մի շարք հարցեր: Անդրադարձ է կատարվում հարցի պատմական կողմին: Հեղինակը կարծում է, որ ներկա սերունդը իրավունք չունի ապագա սերնդին զրկելու իր իրավունքից, ուստի առաջարկում է Անկախության Սերնդին վերակենդանացնել արդարադատությանը մասնակցելու իր իրավունքը:

ՀՏԴ 340
ԳՄԴ 67.0

ISBN 978-9939-0-2488-2

© Ղամբարյան Ա., 2017

Բովանդակություն
Նախաբան.....7

1. Երդվյալ ատենակալների ինստիտուտի դրվատումը և ժխտումը սահմանադրա-իրավական զարգացումների ընթացքում.....8

(a) Ցարական ռուսաստանի 1864թ. Դատական կանոնադրությունների և երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառումը Անդրկովկասում.....8

(b) Երդվյալ ատենակալների ինստիտուտը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920թթ.).....9

(c) 1995թ. Սահմանադրության մեջ երդվյալ ատենակալների ինստիտուտի ամրագրումը. ՀՀ օրենսդիր մարմնի հակասահմանադրական անգործությունը.....10

(d) Երդվյալ ատենակալների ինստիտուտը 2003-2005թթ. Սահմանադրական բարեփոխումների ընթացքում. Իրավունքից չստեղծ կացված հրաժարում12

(e) Երդվյալ ատենակալների ինստիտուտը 2013-2015թ. Սահմանադրական բարեփոխումների ընթացքում. Զգուշավոր հաստատում և կրկին խիզախ ժխտողականություն.....14

2. Հայ իրավաբան-գիտնականների իրավունքի ուժը.....15

(a) Հայ սահմանադրագետները և սահմանադրականության ընկալումը.....15

(1) Վլադիմիր Նազարյանը. ՀՀ-ում երդվյալ ատենակալների ինստիտուտի հիմնադիր Հայրը.....15

(2) Հենրիկ Խաչատրյանը. Երդվյալ ատենակալների դրական ու բացասական կողմերը.....16

(3) Գագիկ Հարությունյանի մասշտաբայնությունը և մեր չարդարացված հույսերը.....	16
(4) Գևորգ Դանիելյանի դիրքորոշումը.....	18
(5) Վարդան Պողոսյանի և Հրայր Թովմասյանի հետևողական ջանքերը և մեր՝ կրկին չարդարացված հույսերը.....	19
<i>(b) Համալսարանականները և երդվյալ ատենակալների ինստիտուտի լատենտային ժխտողականությունը.....</i>	
(1) Տեսաբանը դատական իշխանության մասին և երդվյալ ատենակալների ինստիտուտի մոռացությունը.....	20
(2) Դատական իշխանության գիտական հայեցակարգը և երդվյալ ատենակալների ինստիտուտի անտեսումը.....	20
<i>(c) Հայ քրեագետները երդվյալ ատենակալների մասին.....</i>	
(1) Գագիկ Ջհանգիրյանի կայուն և փաստարկված դիրքորոշումը.....	22
(2) Գրիգոր Բաղդրյանի պատճառաբանությունը.....	23
(3) Հեղինակի առաջին գիտական հոդվածը և նրա ժխտողականությունը. ինքնաքննադատություն.....	24
3. ՀՀ վճռաբեկ դատարանը և հասարակության մասնակցությունն արդարադատությանը.....	25
(a) ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը և այլ դատավորները.....	25
(1) Հենրիկ Դանիելյանի մոտեցումը.....	25
(2) Ելիզավետա Դանիելյանի պատճառաբանությունը.....	26
<i>(b) Քրեական պալատի նախագահները.....</i>	
(1) Մհեր Խաչատրյանի պատմաիրավական մոտրումները.....	27
(2) Դավիթ Ավետիսյանի խիզախ դիրքորոշումը և հուսադրող կանխատեսումը.....	28
(3) Սերժիկ Ավետիսյանի ընդհանրական պատասխանը.....	29
4. Փաստաբանական հանրությունը.....	30
<i>(a) Փաստաբանների պալատի իներտությունը.....</i>	<i>30</i>

(b) Էդմոն Մարուքյանի մտավախությունը.....31

(c) Հայկ Ալումյանի՝ երդվյալ ատենակալների ինստիտուտը վերակենդանացնելու ցանկությունը.....32

(d) Փաստաբանական խմբի կարծիքը և երդվյալ ատենակալների ինստիտուտի մոռացությունը.....33

5. Ավտորիտար մտածողության և երդվյալ ատենակալների ինստիտուտի անհամատեղելիությունը.....33

(a) Ատենակալների ինստիտուտը՝ ավտորիտար մտածողության ռիսերիվ թշնամի.....33

(b) Վ. Լենինը և ռուսական երդվյալ ատենակալների ինստիտուտի կազմալուծումը.....35

(c) Մեղադրական իշխանության կոհորտան.....36

(d) Փոքր մասշտաբի «լենինները» և երդվյալ ատենակալների ինստիտուտի վիժեցումը.....39

(1) Վիժեցման առաջին փուլը. Երդվյալ ատենակալների մասին 1995թ. Մահմանադրության նորմի «սպանությունը».....39

(2) Վիժեցման երկրորդ փուլը. Երդվյալ ատենակալները միայն ցածր կամ բարձր իրավագիտակցության պայմաններում. Հայ ժողովուրդը միջակություն և.....40

6. Սերունդների միջև հակասություն, թ՞ե՞ խզվածություն.....41

(a) Ներկա սերունդը ճանապարհ է հարթում հաջորդող սերնդի համար. Նրանց սիներգետիկան..... 41

(b) Ներկա սերունդն իրավունք չունի հաջորդող սերնդին գրկել արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքից.....42

<i>(c) Հայ հասարակության կառուցվածքում առկա փոփոխությունները.....</i>	<i>43</i>
(1) Անկախության Մերունդը.....	43
(2) Հայ-ռուսական, Ֆրանսիական և Ամերիկյան համալսարանների կրթությունը.....	45
(3) Սիրիահայերի ներգաղթը և նրանց օրինապաշտությունը.....	46
<i>(d) Մի քանի խոսք քրեական վիճակագրության մասին.....</i>	<i>47</i>
7. Երդվյալ ատենակալների ինստիտուտի վերածննդի սկիզբն ազդարարված է.....	48
<i>(a) Մնայուն է քրտնաջան աշխատանքով ձեռքբերված իրավունքը.....</i>	<i>48</i>
<i>(b) Քաղաքացիական նախաձեռնությունը երդվյալ ատենակալների ինստիտուտի վերածննդի սահմանադրական խողովակ.....</i>	<i>49</i>

Նախաբան

Երկար տարիներ փորձել եմ խոսել այս թեմայով, սակայն վերջնական որոշումը կայացրեցի այն ժամանակ, երբ համացանցում կարդացի «Ինչո՞ւ Հայաստանում երդվյալ ատենակալներ չկան» հոդվածը, որի հեղինակը նշում է. «Իսկ ի՞նչ եղավ 1996թ. դատախարավական բարեփոխումների մեջ ամրագրված երդվյալ ատենակալների ինստիտուտը, որ Ռուսաստանում վաղուց է գործում, իսկ Հայաստանում դատավորներն ընդհանուր իրավասության դատարաններում միանձնյա են քննում գործերը: Որքան էլ տարօրինակ է, հայաստանյան իրավաբաններից դեռևս այդ առթիվ որևէ հիշեցում չի եղել, թե ինչու չի իրագործվում 1996թ. դատախարավական բարեփոխումներով նախատեսված դրույթը: Փաստորեն, խորհրդային տարիների ժողատենակալների ինստիտուտը վերացավ 1995–1996թթ., բայց նրանց փոխարեն երդվյալ ատենակալների համակարգ չստեղծվեց, թեպետ նախատեսված էր 1996թ. բարեփոխումների ծրագրով»¹:

Առաջադեմ մարդկությունն ստեղծել է երդվյալների դատարանը, որի առավելությունն այն է, որ երդվյալները լուծում են անձի մեղքի հարցը, այսինքն՝ ամբաստանյալը մեղավոր է, թե ոչ, իսկ պետական դատավորը՝ պատժի հարցը, այսինքն՝ մեղավոր ճանաչված ամբաստանյալի նկատմամբ նշանակում է կոնկրետ պատժատեսակ և պատժաչափ: Նշված երկու գործառույթների տարանջատումն ստեղծում է իրական երաշխիքներ, որպեսզի երդվյալներն իրենց գործառույթներն իրականացնեն ինքնուրույն²:

Սույն ձեռնարկը խորը գիտական հետազոտություն չէ, այն շարադրված է հնարավորինս պարզ լեզվով, քանի որ նախատեսված է այս հարցով հետաքրքրված լայն շրջանակների համար:

Ձեռնարկում խիզախություն եմ ունեցել իմ անձնական նկատառումները ներկայացնել իրավաբանական համայնքի այնպիսի Մեծերի մասին ինչպիսիք են՝ Վլադիմիր Նազարյանը, Հենրիկ Խաչատրյանը, Գագիկ Հարությունյանը, Գևորգ Դանիելյանը, Մհեր Խաչատրյանը, Դավիթ Ավետիսյանը և այլն: Անկախության Մերնդի իրավաբանները պետք է մշտապես լսեն իրենց Մեծերի մասին և կարդան նրանց թողած իրավական մտքի ժառանգությունը:

¹<http://blognews.am/arm/news/301827/inchu-hayastanum-erdvyal-atenakalner-chkan.html>(05.05.2017).

² Մհեր Խաչատրյան. «Անկախ դատարան», «Երեկոյան Երևան» 26.09.1990թ, Հոդվածը տպագրվել է «Քրեական դատավարության տեսության և պրակտիկայի հարցեր: Եր.: 1996» աշխատանքում:

1. Երդվյալ ատենակալների ինստիտուտի դրվատումը և ժխտումը սահմանադրա-իրավական զարգացումների ընթացքում

(a) Յարական ռուսաստանի 1864թ. Դատական կանոնադրությունների և երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառումը Անդրկովկասում:

Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումից հետո իրականացվեցին դատական համակարգի բուրժուական բարեփոխումներ, 20.11.1864թ. ընդունվեցին ռուսական դատական Կանոնադրությունները: Այդ ժամանակ նախատեսվեց նաև երդվյալ ատենակալների ինստիտուտը:

Անդրկովկասում, այդ թվում՝ հայկական տարածքում, ակտիվորեն շարունակվում էր դատական համակարգը համառուսական դատական համակարգին համապատասխանեցնելու գործընթացը: 22.11.1866թ. ընդունվեց Կառավարական Մենատին հասցեագրված՝ «20.11.1864թ. Դատական կանոնադրությունները Անդրկովկասում կիրառելու մասին Կանոնակարգը հաստատելու մասին» կարգադրությունը, որը հնարավորություն էր տալիս այդ բարեփոխումները տարածել Անդրկովկասում: Այդ կարգադրությունն ուժի մեջ մտավ 01.01.1868թ., սակայն այդ ակտով Դատական կանոնադրություններն Անդրկովկասում իրականացվեցին որոշակի փոփոխություններով: Հայաստանի դատական համակարգի համար էական էր այն, որ տարածաշրջանում, ի տարբերություն կենտրոնական գուբերնիաների, երդվյալ ատենակալների ինստիտուտ չներդրվեց: Ամենայն հավանականությամբ, մեղադրյալների իրավունքների այս խախտումը փոխհատուցվեց նրանով, որ մեղադրյալներին իրավունք վերապահվեց դատավճիռը վճռաբեկության կարգով բողոքարկել երկու անգամ: Հիմնական պատճառը, որով հիմնավորվում էր Անդրկովկասում երդվյալ ատենակալների ներդրումից հրաժարվելու գաղափարը, այն էր, որ տեղի բնակչությունը «քիչ է գիտակցում այն իրադարձությունների հանցավորությունը, որը սարսափեցնում է կրթված հասարակությանը, և այդ բնակչությունը, մասնակցելով դատական նիստերին, անխտիր կարդարացնի բոլոր անուղղելի հանցագործներին»³: Մինչդեռ այդ ժամանակահատվածի

³Зурначян А. С. Особенности построения и реформирования судебной системы в Восточной Армении (1828–1900 годы). Политика, государство и право. 2014. № 10. URL: <http://politika.snauka.ru/2014/10/2005> (03.10.2017).

պաշտոնական քրեական վիճակագրության համաձայն՝ Էրիվանի գուբերնիայում հանցավորության մակարդակն Անդրկովկասում ամենից ցածրն էր, նույնիսկ ավելի ցածր էր, քան խոշոր գուբերնիաներից շատերում: Այսպես՝ Էրիվանի գուբերնիայում մեկ խոշոր հանցագործությունը բաժին էր ընկնում 484 մարդու, Թիֆլիսի գուբերնիայում՝ 322 մարդու, Պետերբուրգում՝ 344, Օդեսայի օկրուգում՝ 416 մարդու⁴:

Պետք է փաստել, որ Անդրկովկասում մինչև Ռուսական Կայսրության փլուզումը երդվյալ ատենակալների ինստիտուտ չներմուծվեց⁵:

Ազգային գերաբժեքությամբ չեմ տառապում, բայց պետք է նշեմ, որ 19-րդ դարում Հայաստանում երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծումը մերժող ռուսական փաստարկը՝ հայերի ցածր գիտակցության և բոլոր հանցագործներին արդարացնելու մասին, 21-րդ դարում ըստ էության, կրկնեցինք մենք՝ հայերս: Ինքներս Մեր նկատմամբ ունեցած թերահավատության, նույնիսկ՝ թերաբժեքության բարդույթի հետևանքով 1995-2015թթ. երկու անգամ, ըստ էության, հրաժարվեցինք արդարադատությանը մասնակցելու իրավունքից:

(b) Երդվյալ ատենակալների ինստիտուտը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920թթ.)

06.12.1918թ. Հայաստանի Ազգային խորհրդի կողմից ընդունվեց օրենք «Հայաստանի Հանրապետության տարածքում երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին»: Իրավունքի պատմության մասնագետը նշում է, որ այդ դատարանը ոչ միայն արդյունավետ չգործեց, այլ, կարելի է ասել, համարյա չգործեց և դարձավ դատական գործի ձախողման հիմնական պատճառներից մեկը⁶: Պատմական այս ժամանակշրջանի դատական համակարգը չեմ ուսումնասիրել, ուստի չեմ կարող վիճել հեղինակի հետ, սակայն ցանկալի էր սույն հարցով լսել նաև պատմաբանների կարծիքը:

⁴Туманов Г. Земельные вопросы и преступность на Кавказе. СПб., 1900. Մեջբերումն ըստ Յурначян А. С. Особенности построения и реформирования судебной системы в Восточной Армении (1828 – 1900 годы). Политика, государство и право. 2014. № 10.

⁵Зурначян А. С. Особенности построения и реформирования судебной системы в Восточной Армении (1828–1900 годы). Политика, государство и право. 2014. № 10. URL: [http://politika.snauka.ru/2014/10/2005\(03.10.2017\)](http://politika.snauka.ru/2014/10/2005(03.10.2017)).

⁶ Վաղարշյան Ա. Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը (1918-1920թթ.): Թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր.: 1996, էջ 15:

Բոլոր դեպքերում հետաքրքիրն այն է, որ պատմական այդ բարդ ժամանակահատվածում Մեզ չվախեցրեց ֆինանսական, իրավագիտակցության ցածր լինելու կամ «փոքր երկիր» լինելու հանգամանքները, և մենք խիզախություն ունեցանք ներմուծելու այդ ժողովրդավարական ինստիտուտը:

(c) 1995թ. Մահմանադրության մեջ երդվյալ ատենակալների ինստիտուտի ամրագրումը. ՀՀ օրենսդիր մարմնի հակասահմանադրական անգործությունը

Հայաստանի երրորդ Հանրապետության Մահմանադրության 91-րդ հոդվածում ամրագրվեց, որ օրենքով նախատեսված դեպքերում դատավարությունն իրականացվում է երդվյալների մասնակցությամբ: Այս հոդվածի ձևակերպումներին դեռ հաճախ կանդրադառնամ, սակայն այս հատվածում նշեմ, որ թեև սահմանադիրը (ժողովուրդը) ՀՀ օրենսդրի (ՀՀ ազգային ժողովին) համար սահմանեց երդվյալ ատենակալների ինստիտուտը ներդնելու պահանջ (պարտականություն), սակայն այդ սահմանադրական պահանջը հետագայում ձևախեղվեց որպես ՀՀ օրենսդրին տրված հայեցողություն՝ որոշելու նախատեսել երդվյալ ատենակալների ինստիտուտ, թե՛ ոչ: Արդյունքում՝ ՀՀ օրենսդիրը որոշեց չնախատեսել այս ինստիտուտը: Դա ոչ այլ ինչ էր, քան ՀՀ ազգային ժողովի հակասահմանադրական անգործություն:

Ընդորում՝ 15.01.1997թ. ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների հայեցակարգ-ծրագրի 18-րդ բաժնում նախատեսված էր, որ երդվյալները մասնակցելու են դատավարությանը միայն մահապատիժ և ցմահ ազատազրկում նախատեսող հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ ամբաստանյալի պահանջով: Երդվյալները կլուծեն միայն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը: Ամբաստանյալին մեղավոր ճանաչելու դեպքում պատիժը սահմանում է դատարանը: Քրեական դատավարության օրենսգրքում կնախատեսվի հատուկ բաժին, որտեղ կարտացոլվեն երդվյալների մասնակցությամբ դատավարության առանձնահատկությունները: Անհրաժեշտ էր ընդունել երդվյալների մասին օրենք, որը կսահմանի երդվյալների ընտրության,

դատարան հրավիրելու կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվության հիմքերը և այլն⁷:

20 տարի անց՝ 2015թ., հետադարձ հայացքով կասվի. «1995թ. Սահմանադրությամբ նախատեսված էր այդ ինստիտուտը, բայց չգործեց: Երդվյալների ինստիտուտը կարող է արդյունավետ գործել երկու իրավիճակում՝ խիստ զարգացած հասարակություններում և դեռևս չձևավորված: Մենք միջին վիճակում ենք: Մեզ մոտ գտնել 6, 10, 12 երդվյալ ատենակալին ներկայացվող պահանջները բավարարող քաղաքացի, բավականին դժվար է»⁸: «Երդվյալների ինստիտուտն արդյունավետ կարող է գործել հասարակության զարգացման երկու աստիճաններում: Առաջին, երբ հասարակության մեջ իրավագիտակցության մակարդակը բավականին ցածր է, և երկրորդ, բարձր իրավագիտակցության պայմաններում, երբ քաղաքացիական պարտքը վեր է դասվում ազգակցական, արյունակցական և այլ կապերից: Մենք միջին մակարդակում ենք, որտեղ կարող է նույնիսկ հակացուցված և ռիսկային լինել նման իրավակարգավորման նախատեսումը»⁹:

Իհարկե, յուրաքանչյուրս մեր գիտակցությամբ և զգայարաններով ենք ընկալում մեզ շրջապատող իրականությունը, միջավայրի զարգացվածության աստիճանը և այն գնահատում ենք մեր ունեցած փորձի հիման վրա: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ միջավայրում, ինչ հայացքով և ինչ դիրքերից ես կյանքին նայում:

Երկար տարիներ է տարբեր համալսարաններում շփվում եմ ուսանողության հետ, դրան զուգահեռ, պրակտիկ աշխատանքի բերումով, շփվում եմ նաև հանցագործության մեջ մեղադրվող անձանց, հանցագործությունից տուժածների հետ և բնավ այն կարծիքին չեմ, որ մեր հասարակությունն առայսօր միջին վիճակում է (շատ դժվար է չափել հասարակության «միջինությունը»), նույնիսկ հանցագործության մեջ մեղադրվողների իրավագիտակցության կառուցվածքում առկա են որակական փոփոխություններ: Այս ամենը չտեսնելու համար կամ պետք է կույր լինել, կամ՝ իրականությունից կտրված: Մենք վաղուց

⁷ Գազիկ Զհանգիրյան. Արդարադատության և քաղաքականության խառնարանում: Եր. Հեղ. հրատ., 2016, էջ 581:

⁸ Ղազիկյան Գ. Հասարակությունը պետք է չհանդուրժի ցանկացած այլ մոտեցում, քան արդարադատությունն է: 23/03/2015: <http://hetq.am/arm/news/59192/gagik-xazinyan-hasarakutyuny-petq-e-chhandurzhi-cankacats-ayl-motecum-qan-ardaradatutyunn-e.html> (06.11.2017).

⁹ Ղազիկյան Գ. Դատական երկաստիճան համակարգի ձևավորումն այլընտրանքային լուծումներից մեկն է: 10/07/2014: <https://168.am/2014/07/10/386265.html> (06.11.2017).

հաղթահարել ենք մարզինալության վիճակը, իսկ Անկախության Սերունդը որակապես տարբերվում է նախորդ սերնդից (այս մասին հաջորդիվ):

(d) Երդվյալ ատենակալների ինստիտուտը 2003-2005թթ. սահմանադրական բարեփոխումների ընթացքում. Իրավունքից չտեղեկացված հրաժարում

2003-2005թթ. սահմանադրական բարեփոխումների աշխատանքը համակարգում էր իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հարությունյանը, ով ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի նախագահն էր: Հարցազրույցներից մեկում իմ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարը՝ Ա. Հարությունյանը, նշել է, որ դեմ չէ, որ մեր դատարաններում գործի երդվյալ ատենակալների համակարգը¹⁰: Մինչդեռ գործնականում ստացվեց այնպես, որ 1995թ. ՀՀ Սահմանադրության տեքստից երդվյալ ատենակալների մասին դրույթը ջնջվեց: Միգուցե մոտեցումն այն էր, որ սահմանադրական տեքստը պետք էր մաքրել «մահացած» նորմերից:

Պատմական գիտությունների թեկնածու, իրավագետ Մ. Թելունցն այս կապակցությամբ նշում է. «Արդարադատության անաչառության լրջագույն երաշխիք կարող է դառնալ երդվյալ ատենակալների ինստիտուտի ամրագրումը, որը նախատեսված էր 1995թ. ընդունված Սահմանադրությամբ և որը «լռելյայն» վերացվեց 2005թ. Փոփոխություններով՝ լեթարգիական քնի մեջ գտնվող մեր ժողովրդի աչքերի առջև՝ հենց իր՝ «ժողովրդի ձեռքով»¹¹: Կարծում եմ, որ այս դատադրության մեջ առկա է ենթատեքստ, որը սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու տեսության տեսանկյունից խիստ արժեքավոր է: Հայ ժողովուրդը հրաժարվեց արդարադատությանը մասնակցելու իր իրավունքից, սակայն այս իրավունքից հրաժարումն իրավաչափ չէր, քանի որ Ժողովուրդը քարացածության (քնած) վիճակում էր, տեղեկացված չէր այդ մասին, ուստի իրավունքից հրաժարումը գիտակցված չէր, իսկ իրավունքից՝ չտեղեկացված (չգիտակցված) հրաժարվելն իրավունքից հրաժարում չէ:

¹⁰ Արմեն Հարությունյան. Երդվյալ ատենակալների համակարգը մեզ չի խանգարի: 30/10/2002: <http://www.a1plus.am/2061.html> (03.11.2017).

¹¹ Մայիկ Թելունց. Հետխորհրդային իրականությունը և ժամանակակից ՀՀ սահմանադրական իրավունքի հիմնախնդիրները: <http://www.aravot.am/2014/06/16/471162/> (04.11.2017).

Այդ ժամանակշրջանում թեև վերացվեց երդվյալ ատենակալների մասին նորմը, սակայն 2005թ. Սահմանադրության 30-րդ հոդվածում ամրագրվեց պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի մասին նորմը, որի համաձայն՝ տասնութ տարին լրացած ՀՀ քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ այս իրավունքը նույնպես վերացվեց, իսկ 49-րդ հոդվածում ամրագրվեց միայն հանրային ծառայության անցնելու իրավունքը):

Տեսության մեջ նշվեց, որ պետության կառավարմանը քաղաքացու մասնակցությունն ապահովվում է մի շարք իրավունքների միջոցով, որոնք նախատեսված են Սահմանադրության այլ հոդվածներով: Դրանք են՝ ա) ընտրելու և ընտրվելու իրավունքը, բ) պետական ծառայության հավասար հնարավորության իրավունքը, գ) *արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքը*, դ) պետիցիաների իրավունքը¹²: Արդարադատությանը մասնակցելու իրավունքը պետական կառավարմանը մասնակցելու իրավունքից բխեցնելը լիովին համապատասխանում է այդ իրավունքի էությանը, սակայն միայն զարմանք էս ապրում, երբ հաջորդիվ կարդում ես հեղինակի՝ արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքի մեկնաբանությունը: Ըստ նրա՝ արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր քաղաքացու՝ առանց որևէ խտրականության զբաղեցնել դատավորի պաշտոնը¹³: Արդարադատությանը մասնակցելու իրավունքը նույնացվեց դատավորի պաշտոն զբաղեցնելու իրավունքի հետ: Ինչու ենք դատավորի պաշտոնում նշանակվելու իրավունքը առանձնացնում հանրային ծառայության անցնելու իրավունքից, չէ որ դատավորի պաշտոնում նշանակվելը նույն հանրային ծառայության անցնելու իրավունքի դրսևորումն է: Կարծում եմ, որ հասարակության՝ արդարադատությանը մասնակցելու իրավունքի իրականացման գործունակ կառուցակարգը դատավորի ընտրությունն է կամ երդվյալ ատենակալների ինստիտուտը (կամ դրան նման գործունակ այլ ինստիտուտ):

¹²Այվազյան Վ. Մարդու իրավունքներ և ազատություններ: Ոս. ձեռնարկ. Եր.: Տիգրան Մեծ, 2007, էջ 156:

¹³Նույն տեղը:

(e) Երդվյալ ատենակալների ինստիտուտը 2013-2015թ. Սահմանադրական բարեփոխումների ընթացքում. Զգուշավոր հաստատում և կրկին խիզախ ժխտողականություն

2014թ. հրապարակված՝ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում նշված է. «Քննարկման առարկա է նաև ազգային արդարադատական համակարգում դեռևս չփորձարկված այնպիսի ինստիտուտի ներմուծումը, ինչպիսին է, օրինակ, երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարությունների իրականացման հնարավորության նախատեսումը: Մակայն, ամեն դեպքում, նկատի է առնվում, որ արդարադատության իրականացման հիմնական ծանրությունը կրելու է դատական համակարգի առաջին ատյանը՝ որպես ցանկացած իրավական վեճ ըստ էության քննող դատարան¹⁴»:

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի առանձին մասնագետներ 2015թ. պատրաստել են գիտագործնական մեկնաբանություններ, որտեղ երդվյալ ատենակալների մասին որևէ դիրքորոշում ներկայացված չէ¹⁵, մինչդեռ Հայեցակարգում առաջարկվում էր երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծման հարցը դարձնել քննարկման առարկա: Կարծում եմ, որ պետք էր հարցը քննարկել հենց այս տեսակի աշխատանքներում: Այս պարագայում լռությունը նույնպես դժվար է հասկանալ:

¹⁴ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից: Եր.: հոկտեմբեր 2014թ. <http://www.parliament.am/library/sahmanadrankan%20barepoxunner/hayecakarg.pdf> (06.11.2017).

¹⁵Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն): Ընդհանուր խմբ.՝ Գ. Դանիելյան: Եր.: Հայրապետ հրատ., 2015:

2. Հայ իրավաբան–գիտնականների իրավունքի ուժը

(a) Հայ սահմանադրագետները և սահմանադրականության ընկալումը

(1) **Վլադիմիր Նազարյանը.** ՀՀ-ում երդվյալ ատենակալների ինստիտուտի հիմնադիր Հայրը: Անկախ Հայաստանի Սահմանադրության հիմնադիր Հայրը համարվում է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Նազարյանը, ով գրել է Անկախ Հայաստանի Սահմանադրության հայեցակարգը և, ընդունված է համարել, որ առավելապես նա է աշխատել 1995թ. Սահմանադրության նախագծի վրա: Վլադիմիր Նազարյանին՝ որպես Սահմանադրության հիմնադիր Հայր, կարգել է հատկապես իրավաբանների համայնքի ավագ սերունդը, օրինակ՝ Գագիկ Հարությունյանը նշում է, որ Վլադիմիր Նազարյանն ազգային մեծություն է ¹⁶:

Անկախության Սերնդի իրավաբանները, ովքեր հնարավորություն չեն ունեցել լսելու կամ շփվելու Վլադիմիր Նազարյանի հետ, պետք է ունկնդրեն ստորև նշված նյութը¹⁷ և կարդան նրա գիտական աշխատությունները¹⁸: Ես նույնպես հնարավորություն չեմ ունեցել ունկնդրելու Վ. Նազարյանի դասախոսությունները կամ շփվելու նրա հետ, սակայն վերջերս դժվարությամբ ձեռք եմ բերել նրա՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Երևան, Գոշ, 1992թ.» աշխատությունը: Պարզապես ապշած եմ, թե ինչպես 1992թ., երբ Հայաստանում տեղի էր ունենում սոցիալական կյանքի համակարգային փոփոխություններ և արժեհամակարգի տոտալ փլուզում, հնարավոր էր դուրս գալ խորհրդային օրենսդրագիտության կապանքներից և ներկայացնել մետաֆիզիկական իրավագիտության տիրություն գտնվող առաջադիմական և մինչ այսօր արդիական մի շարք գաղափարները. Ժամանակի և տարածության մեջ ակադեմիական վերլուծություններ, իրական ակադեմիկոս ...:

Ինչ վերաբերում է երդվյալ ատենակալներին, ապա պետք է ցավով նշեմ, որ նրա աշխատություններում այդ մասին որևէ դատողության

¹⁶ https://www.youtube.com/watch?v=C_bng4Y4JFE (06.11.2017).

¹⁷ Հայտնի Անհայտը. ՀՀ սահմանադրության հայրը՝ Վլադիմիր Նազարյան: <https://www.youtube.com/watch?v=hnmkQJxQEeM> (06.11.2017).

¹⁸ Նազարյան Վ. Ռ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Եր.: Գոշ, 1992:

չհանդիպեցի¹⁹: Անկախ դրանից, ելնում եմ այն կանխավարկածից, որ Վլադիմիր Նազարյանը, համարվելով 1995թ. Սահմանադրության հիմնադիր Հայրը, հավասարապես համարվում է նաև երդվյալ ատենակալների ինստիտուտի հիմնադիր Հայրը:

(2) Հենրիկ Խաչատրյանը. երդվյալ ատենակալների դրական ու բացասական կողմերը: Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Խաչատրյանը չափազանց բարձր էր գնահատում երդվյալների դերը՝ կարծելով, որ սխալները նրանց կողմից էլ բացառված չեն, քիչ դեր չեն խաղում հույզերը, դիրքորոշումների փոփոխականությունը, սակայն ամբողջությամբ վերցված՝ երդվյալների դատարանի բացասական կողմերն ավելի քիչ են, քան արհեստավարժ դատավորինը, չնայած, նա նույնպես կարծում էր, որ երդվյալների դատարանը կոչված է մարդու մեղքի առկայությունը կամ բացակայությունը որոշել ոչ այնքան դատական ապացույցների ուսումնասիրության հիման վրա, որքան ներըմբռնողության և տարբեր մոտեցումների ու գնահատականների բաղդատման հաշվին²⁰:

Հ. Խաչատրյանը 1997թ. հրատարակած՝ «Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը» աշխատությունում հստակ նշել է, որ այսօր օրենսդրի խնդիրն է առանց հապաղելու ՀՀ Սահմանադրության հիման վրա որոշել երդվյալների դատարան գումարելու պայմանները, նրա թվական կազմն ու իրավասությունը²¹: Նա այն եզակի սահմանադրագետներից էր, ով 1995թ. Սահմանադրության 91-րդ հոդվածը մեկնաբանեց՝ որպես երդվյալ ատենակալների ինստիտուտը ներդնելու մասին սահմանադրական պահանջ և ոչ թե օրենսդրին տրված հայեցողություն:

(3) Գագիկ Հարությունյանի մասշտաբայնությունը և մեր չարդարացված հույսերը: Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, սահմանադրական իրավունքի փիլիսոփա Գագիկ Հարությունյանը, ով ժամանակակից իրականության մեջ սահմանադրական արժեքաբանության (աքսեոլոգիայի), սահմանադրականության և սահմանադրական մշակույթի տարածման հարցում ունի լրջագույն ներդրում,

¹⁹ Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Եր.:Գոշ, 1992, Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը: Ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Եր.: 1995:

²⁰ Հենրիկ Խաչատրյան. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Եր.: 1997, էջ 267:

²¹ Նույնտեղում, էջ 267:

երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծումը, ցավոք, համարել է վաղաժամ:

2015թ. սահմանադրական բարեփոխումների ընթացքում նա, հանդիսանալով ՀՀ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահ, նշել է. «Ես կատեգորիկ դեմ եմ, որ մեզ մոտ ցանկացած քրեական գործի քննություն իրականացվի երդվյալների մասնակցությամբ: Մենք դա ֆինանսապես չենք կարող անել և ոչ էլ կհասնենք արդյունքի»²²: Մամուլում մեջբերվում են նաև Գագիկ Հարությունյանի հետևյալ խոսքերը. «Բայց առկա է այլ երկրների փորձը, որը կարող ենք հաշվի առնել: Ամենավերջին փորձերից մեկը, որն ուշադրության է արժանի, Վրաստանի փորձն է, երբ ներդրեցին ժյուրիի ինստիտուտը՝ առանձնապես ծանր հանցագործություններով գործերի քննության շրջանակում: Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման այսօրվա միտումներն իմպուլս են տալիս, որ մենք էլ կարող ենք ոչ թե կատեգորիկ հրաժարվել, այլ փորձել օգտագործել այդ ինստիտուտի հնարավորությունները: Բացառապես ծանր հանցագործությունների համար կարելի է նախատեսել ու տեսնել, թե ինչպես է աշխատում: Եթե հանրությունն օտարված չէ պետական գործերից ու իր մասնակցությունն ունի դրանում, ժյուրիի անդամը միայն իր սուբյեկտիվ ընկալումների տեսանկյունից չի հանդես գալու և ինքը, հաշվետվողականության պարտավորություն ունենալով, օբյեկտիվ է լինելու»²³:

Գագիկ Հարությունյանը, ով առանձնանում է երիտասարդ սերնդի իրավաբաններին, այդ թվում՝ ինձ, մշտապես աջակցելու, ճանապարհ հարթելու պատրաստակամությամբ, գիտակցում է քաղաքացիական հասարակության զարգացման ներկայիս միտումները և չի բացառում երդվյալ ատենակալների ինստիտուտի հնարավորությունը: Վստահ եմ, որ արդարադատության համակարգում երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրումը դատական իշխանության ներսում կբարձրացնի իմունային համակարգը, կգործի հակակշիռների օբյեկտիվ կառուցակարգ, և էապես կփոխվի արդարադատության նկատմամբ հանրային ընկալումը:

²² <https://www.panorama.am/am/news/2014/05/30/gen-prosecutor/275596>.

²³ Դատական իշխանության վերնախավը վաղ է համարում երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառումը: 31/05/ 2014: <http://lurer.com/?p=144305&l=am> (03.11.2017).

Հաճախ նշում ենք, որ ունենք դատարաններ, բայց չունենք արդարադատություն, չունենք դատական իշխանություն: Երդվյալ ատենակալների ինստիտուտը կարող է հանդիսանալ դատարանի և արդարադատության քսեսեղողական խզվածությունն հաղթահարելու գործուն խողովակ: Այս իմաստով՝ երդվյալ ատենակալները կարող են նպաստել «ինստիտուտ-գործառույթ» համակարգի սիներգետիկային:

(4) Գևորգ Դանիելյանի դիրքորոշումը: Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Դանիելյանը, ով այդ ժամանակ ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետ էր, 2000թ. «ՀՀ Մահմանադրական իրավունք» դասագրքում գրում է. «ՀՀ քր. դատ. օր-ով կարող էր սահմանվել երդվյալների ինստիտուտի կիրառումը, սակայն, նկատի ունենալով հանրապետության սոցիալ-տնտեսական դեռևս ոչ բարվոք պայմանները, օրենսդիրն առայժմ ձեռնպահ է մնացել այդ ինստիտուտի կիրառությունից, թեպետ մի շարք բնույթի գործերով երդվյալների մասնակցության թեկուզ սահմանափակ կիրառումը հնարավորություն կտար ձեռք բերել բավարար փորձ այդ ինստիտուտի ներդրման հետագա ուղիների և շրջանակների ճշգրտման առումով» (էջ 575): Անկասկած, համաձայն եմ իմ ավագ գործընկերոջ՝ սահմանափակ գործերով երդվյալ ատենակալների ինստիտուտի կիրառության դեպքում փորձ ձեռք բերելու մասին մտքի հետ, սակայն պետք է փաստեմ, որ հեղինակավոր սահմանադրագետի դատողությունից անորոշ է մնում նրա մոտեցումը՝ 1995թ. սահմանադրական նորմը երդվյալների մասին օրենք ընդունելու հարցում օրենսդրի համար նախատեսում էր պարտականություն, թե՞ հայեցողություն: Կարծում եմ, որ տվյալ դեպքում ոչ թե պետք էր որևէ պատճառաբանությամբ արդարացնել ՀՀ օրենսդրի հակասահմանադրական անգործությունը, այլև՝ բարձրաձայնել նրա կողմից թույլ տված սահմանադրական խախտումը:

Այնուամենայնիվ, վստահաբար կարող եմ ասել, որ Գ. Դանիելյանը երդվյալ ատենակալների ինստիտուտի կողմնակիցներից է: Նա 09.03.2017թ. իր ֆեյսբուքյան էջում հրապարակել է հետևյալ գրառումը. «Առաջին Հանրապետության իշխանություններն անխուսափելիորեն թույլ են տվել բազում սխալներ, սակայն բոլոր ժամանակների համատեքստում անհամեմատելի սխրանքներ են գործել ու անհավատալի իրավաքաղաքական մշակույթի հիմնաքարը դրել: Այդ ծայրահեղ աղքատ Երկրում չեն վարանել և անգամ երդվյալ ատենակալների ինստիտուտ են

ներդրել, ինչը մեզանում փոխկապակցվում է ֆինանսական դժվարությունների հետ և այլն»:

(5) Վարդան Պողոսյանի և Հրայր Թովմասյանի հետևողական ջանքերը և մեր՝ կրկին չարդարացված հույսերը: Պետականագետներ Վարդան Պողոսյանը և Հրայր Թովմասյանը նույնպես ՀՀ-ում երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրման հետևողական կողմնակիցներից են: Այսպես՝ 2005թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ նրանց կողմից պատրաստվել էր Սահմանադրության փոփոխությունների այլընտրանքային նախագիծ, որի 151-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված էր դրույթ՝ ըստ որի օրենքով սահմանված դեպքերում և կարգով դատավարությունն իրականացվում է երդվյալների մասնակցությամբ²⁴: Սակայն այդ ժամանակ, ինչպես նշվեց, ընդունվեց Սահմանադրության փոփոխությունների այն նախագիծը, որտեղ երդվյալ ատենակալների մասին դրույթը հանված էր:

Վարդան Պողոսյանը և Հրայր Թովմասյանը հետևողականություն դրսևորեցին նաև 2015թ. սահմանադրական բարեփոխումների ընթացքում: Այդ ժամանակ, նրանք ՀՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամներ էին, և իմ ունեցած տեղեկություններով՝ առավել ակտիվ մասնակցություն են ունեցել Սահմանադրության փոփոխությունների հայեցակարգի մշակման գործում: Թերևս այս հանգամանքով կարելի է բացատրել, որ 2014թ. հրապարակված Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում առաջարկվեց երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծումը դարձնել քննարկման նյութ:

Ինչպես արդեն հայտնի է, պետականագետների հետևողական ջանքերը կրկին հաջողություն չունեցան, և երդվյալ ատենակալների ներմուծման վերաբերյալ հույսերը չարդարացան: Հաղթեց մեղադրական իշխանության սերտախմբի (քրեական հետապնդման մարմինների) դիրքորոշումը և ամբողջատիրական մտածողությունը:

²⁴ Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Գրիգորյան Վ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ: Եր.: 2005, էջ 62:

(b) Համալսարանականները և երդվյալ ատենակալների ինստիտուտի լատենտային ժխտողականությունը

1995-2005թթ. համալսարանի իրավաբանական ֆակուլտետում գերակայում էր երդվյալ ատենակալների ինստիտուտի վերաբերյալ լռելյայն մերժողականությունը: Իրավագետները, որպես կանոն, իրենց գիտական աշխատանքներում այս հարցին չէին անդրադառնում՝ դրանով իսկ մոռացության մատնելով դրա անհրաժեշտությունը:

(1) Տեսաբանը դատական իշխանության մասին և երդվյալ ատենակալների ինստիտուտի մոռացությունը: 1998թ. ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչը «Իրավագիտության հարցեր» գիտական հանդեսում (1998թ, թիվ 3, էջեր 34-39) ռուսերեն հրապարակեց «Արդարադատության գործառույթը. Հիմնախնդիրներ և դատողություններ» վերստույգամբ հոդվածը: Նշված հոդվածում վերլուծվում են 1995թ. Սահմանադրության՝ դատական իշխանության վերաբերող գլխի մի շարք դրույթներ, սակայն հեղինակը չի անդրադառնում երդվյալ ատենակալների ինստիտուտին:

(2) Դատական իշխանության գիտական հայեցակարգը և երդվյալ ատենակալների ինստիտուտի անտեսումը: 2000թ. ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկանը, քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչը, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչը և նույն ամբիոնի դոցենտը «Իրավագիտության հարցեր» գիտական հանդեսում (թիվ 3-4, էջեր 7-15) հրապարակեցին «Դատական իշխանության հայեցակետը Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների գործընթացում» հոդվածը, որտեղ դատավարագետները ներկայացնում էին դատական իշխանության վերաբերյալ իրենց տեսլականը: Հոդվածում հեղինակները ներկայացրել էին նաև դատական իշխանությանը նվիրված Սահմանադրության համապատասխան գլխի նախագիծ: Հոդվածի տեսական մասում հեղինակները որևէ կերպ չեն անդրադառնում երդվյալ ատենակալների ինստիտուտին, իսկ Սահմանադրության՝ դատական իշխանությանը նվիրված գլխի նախագծում արդեն բացակայում էր երդվյալ ատենակալների մասին դրույթ: Արդյո՞ք հեղինակները պարզապես բաց են թողել այս հարցը, թե՞ սա գիտակցաբար կատարված ընտրություն էր: Կարծում եմ, որ դատավարագետները դատական իշխանության տեսլականում երդվյալ ատենակալների մասին տողեր չէին նախատեսել: Բիարկե, սա նշված

գիտնականների գիտակցաբար կատարած ընտրությունն է, որը կարելի է կամ ընդունել, կամ ոչ, սակայն նման համակարգային ինստիտուտը 1995թ. Սահմանադրությունից հանելու ընտրությունը պետք է կատարվեր ոչ թե պարզունակ լրությամբ, այլ հիմնավոր պատճառաբանություներով: Միգուցե հեղինակների համար այնքան ակնհայտ էր այս ինստիտուտի անհամատեղելիությունը հայկական իրականության հետ: Հարց, որի դրական պատասխանը կարող է հիմնված լինել միայն ենթադրությունների վրա:

Ընդ որում, նշված ժամանակաշրջանում համալսարանական պատերից ներս տարածում ստացավ սահմանադրական տեքստերի մեկնաբանության մեթոդաբանության հետ առնչություն չունեցող այն մոտեցումը՝ ըստ որի ՀՀ 1995թ. Սահմանադրությունն ընթացիկ օրենսդրության հայեցողությանն է թողնում երդվյալ ատենակալների ինստիտուտի հիմնադրումը (91-րդ հոդվածի 2-րդ մաս)²⁵, որին կանդրադառնանք հաջորդիվ:

Ի դեպ, այդ ժամանակ երդվյալ ատենակալների ինստիտուտի հարցը չգրված տարուների շարքում էր, իսկ եթե նույնիսկ հնարավոր էր այն քննարկել, ապա՝ քննադատական և ժխտողական տեսանկյունից: Օրինակ՝ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ Գ. Բադրիյանը դատական բարեփոխումներին նվիրված աշխատանքում նշում է. «Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծումը մեր հանրապետությունում նպատակահարմար չէ: Այս հարցի լուծման համար պետք է կատարվի հատուկ հետազոտություն, այդ թվում և օրենսդրական փորձարկում՝ որոշելու համար, թե նոր դատական համակարգում ավելի արդյունավետ կլինի՞ կիրառել ատենակալների ինստիտուտը, թե՞ օրենքով նախատեսված դեպքերում առանձին քրեական և քաղաքացիական գործերի առաջին ատյանի դատարաններում արհեստավարժ դատավորների կոլեգիայի կողմից քննելու սկզբունքը: Չնայած դրան, համեմատության դեպքում մենք որոշ առումով առաջնություն ենք տալիս ատենակալների ինստիտուտի վերականգնմանը, քանի որ դրանով լուծվում է նաև դատական իշխանության իրականացմանը հասարակայնության մասնակցության

²⁵ Ղազինյան Գ. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում: Եր.: Երևանի համալս. շրատ., 2001, էջ 152:

ապահովման հարցը»²⁶ : Արդյո՞ք ստացվում է, որ երդվյալ ատենակալների ինստիտուտը լավն է, բայց ոչ հայերի կամ հայկական իրականության համար:

Պատահական չէ, որ 1995-2005թթ. քրեական դատավարության մասնագիտությամբ երդվյալ ատենակալների մասին թեկնածուական ատենախոսություն չգրվեց, այն պայմաններում, երբ առկա էր նման հետազոտություն կատարելու բոլոր անհրաժեշտ հիմքերը²⁷ : Այդ ժամանակահատվածում դատավարագիտության մեջ գերակայում էր քննարկվող հարցի վերաբերյալ «լռություն, կամ քննադատություն» կանոնը:

(c) Հայ քրեագետները երդվյալ ատենակալների մասին

(1) Գագիկ Ջհանգիրյանի կայուն և փաստարկված դիրքորոշումը:

Փորձառու դատախազ, իրավագիտության թեկնածու Գագիկ Ջհանգիրյանը 1994թ. «Դատական բարեփոխումները երկունքի մեջ» վերաառույթյամբ հոդվածում (17.03.1994թ.) նշում է. «Մահապատժով հետապնդվող հանցագործությունների վերաբերյալ գործերով նախատեսել երդվյալ ատենակալների ինստիտուտ՝ երդվյալ ատենակալներին հանձնելով ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցի լուծումը: Երդվյալ ատենակալների դատարանին մասնակցելը պետք է դիտվի ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու պարտքը, հրաժարվելը կամ անձին երդվյալ ատենակալների դատարանին ներկայանալուն խոչընդոտելը հարկ է, որ առաջ բերի դրամական խոշոր տուգանք»²⁸:

Գագիկ Ջհանգիրյանը երդվյալ ատենակալների վերաբերյալ իր մոտեցումն ըստ էության պահպանել է նաև հետագայում: 2012թ. հրատարակված նրա աշխատանքում կարդում ենք. «Երդվյալ ատենակալների ինստիտուտի բացակայության պարագայում, երբ թե՛ մեղքի հարցը և թե՛ պատժի սահմանումը գտնվում են դատարանի բացառիկ լիազորության շրջանակներում, ծանր ու առանձնապես ծանր հանցանքների գործերով դատավորների կողեզիակ կազմի նախատեսումը

²⁶Բաղիրյան Գ. Դատավարական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը: Եր.: «Անտարես», 2002, էջ 147:

²⁷ Դերձյան Հ. Հայ իրավագետներ. գիտակենսագրական հանրագիտարան: Եր.: Հրատ. Հայրապետ, 2016, էջեր 272-294:

²⁸ Հոդվածը տպագրվել է Գագիկ Ջհանգիրյանի՝ «Արդարադատության և քաղաքականության խառնաբանում»: Եր. Չեղ.հրատ., 2016» աշխատանքում:

դիտարկում ենք որպես դատական հնարավոր սխալներից խուսափելու լրացուցիչ միջոց: Մեկ դատավորի համեմատ, բնականաբար, ավելի քիչ է երեք փորձառու դատավորի սխալվելու հավանականությունը»²⁹: Մեջբերումից նկատվում է, որ հեղինակը կարծես թե այլևս հույսեր չունի, որ Հայաստանում երբևէ կներդրվի երդվյալ ատենակալների ինստիտուտ, ուստի առաջարկում է ծանր ու առանձնապես ծանր հանցանքների գործերը քննել կոլեգիալ կազմով: Վստահ եմ, որ Գագիկ Ջհանգիրյանն ականատես է լինելու Անկախության Մերնդի՝ երդվյալ ատենակալների ինստիտուտի վերածննդի գործընթացի նախաձեռնությանը:

(2) Գրիգոր Բաղիրյանի պատճառաբանությունները: Իրավագիտության դոկտոր Գ. Բաղիրյանը երդվյալ ատենակալների մասին նաև նշել է. «Մեր Հանրապետության պայմաններում, որտեղ տարածքների ազգաբնակչությունը ճանաչում է իրար, դժվար է յուրաքանչյուր կոնկրետ գործով հրավիրել գործի էլքով չշահագրգռված առնվազն 12 անձ: Չպետք է շրջանցել նաև այն իրողությունը, որ մեր ժողովրդի մեջ գոյություն ունի առանձին դեպքերում մեղադրվող անձանց պաշտպանելու և նրանց նկատմամբ ցուցաբերելու խղճահարության ընդգծված վերաբերմունք: Դրակա՞ն է սա, թե՞ բացասական, այնուամենայնիվ այն գոյություն ունի: Նման հոգեբանություն կարող էր առաջանալ դարեր շարունակ պետականություն չունենալու պատճառով օտար իշխանությունների հարկառուների ու դաժան ջարդարարների կողմից հետապնդվելու դեպքերում միմյանց կարեկցելու, այդպիսի հետապնդումներից խուսափելու հարցում միմյանց օգնելու և պաշտպանելու ավանդական սովորույթից: Միգուցե կան նաև մեր ժողովրդի առանձնահատկություններով և հոգեկերտվածքով պայմանավորված այլ պատճառներ, որոնք կարող են պարզաբանվել համապատասխան հետազոտությունների արդյունքում»³⁰:

Չեմ կարող համաձայնել գործընկերոջս նշած մոտեցումների հետ, սակայն նրա աշխատանքում առկա է երկու սկզբունքային դիրքորոշում: *Նախ*՝ նա իրավացիորեն նշում է, որ ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանումը ենթադրում է երդվյալ ատենակալների ինստիտուտի պարտադիր կարգով ստեղծումը՝ համապատասխան օրենքներում: Ճիշտ չէ օրենսդրի այն մոտեցումը՝ համաձայն որի այդ

²⁹Գագիկ Ջհանգիրյան. Դատա-իրավական բարեփոխումների հայեցակարգ-ծրագիր: Եր.: Ֆենոմեն, 2012, էջ 27:

³⁰Բաղիրյան Գ. Դատավարական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը: Եր.: «Անտարես», 2002, էջ 147:

ինստիտուտի նախատեսումը հայեցողական է, ինչից ելնելով էլ այն չի նախատեսվել: *Երկրորդ*՝ նա համակարծիք է այն տեսակետին, որ երդվյալ ատենակալների ինստիտուտն ամենաժողովրդավարականն է՝ համեմատած այլ համակարգերի հետ, քանի որ այս դեպքում գործադիր իշխանության ներկայացուցիչը՝ պետական մեղադրողը, պետք է անձի մեղավորությունն ապացուցի ոչ թե դատավորին, ով համարվում է մեկ ուրիշ՝ թերևս անկախ իշխանության ներկայացուցիչ, սակայն վերջին հաշվով պետական չինովնիկ է, այլ հասարակության ներկայացուցիչներին, այսինքն, կարելի է ասել՝ հասարակությանը, ժողովրդին: Անձի մեղավորության հարցի որոշումը հասարակության ներկայացուցիչների կողմից այդ համակարգի անգերազնահատելի արժանիքն է³¹: Իսկ հայկական իրականության նկատմամբ նրա թերահավատությունը պետք է որ այս տարիների ընթացքում հաղթահարված լինի. չէ որ արդեն ունենք պետականության և տեղեկատվական հասարակության պայմաններում ձևավորված Անկախության Մերունդ:

(3) Հեղինակի առաջին գիտական հոդվածը և նրա ժխտողականությունը. ինքնաքննադատություն: ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսում սովորելու տարիներին՝ 2002թ., հրապարակվեց «Հասարակական կարծիքը և քրեական դատավարությունը» վերտառությամբ իմ առաջին գիտական հոդվածը («Օրենք և իրականություն», 2002թ, թիվ 10, էջեր 22-24): Նշված հոդվածում գրում եմ. «Անհերքելի է, որ հասարակական կարծիքը մեծ ազդեցություն ունի երդվյալ դատավորների վրա, որոնք բնութագրվում են որպես «փողոցի դատարան»: Այս ինստիտուտի ընդդիմախոսները բերում են իրավական, քաղաքական, տնտեսական, տարածքային փաստարկներ, սակայն լուրջ ուշադրություն չի դարձվում այն հանգամանքի վրա, որ այս ինստիտուտի կիրառման դեպքում փաստացի արդարադատություն իրականացնում է հասարակությունը՝ դատարանի շենքերի առաջ կանգնելով, ցույցեր կազմակերպելով, հայտարարություններ անելով: Իսկ արդյո՞ք մեզ անհրաժեշտ է, որ արդարադատություն իրականացնեն «փողոցի դատավորները», որոնց նույնիսկ առօրեական իրավագիտակցության մակարդակը ակնհայտ է»: Այդ ժամանակ իրավաբանների գիտակցության մեջ գերակայող այս տեղեկատվական «աղբը», ավելի ճիշտ

³¹ Նույն աշխատությունը, էջեր 60-64:

ախտն ախտահարել էր նաև իմ գիտակցությունը: Սա ոչ թե ինքնա-արդարացում է, այլ ինքնաքննադատություն:

Արդարադատություն իրականացվում է հանուն ժողովրդի (անկախ նրանից, որ պոզիտիվ իրավունքում գրված է, որ արդարադատությունն իրականացվում է հանուն պետության), ուստի ժողովրդի ներկայացուցիչները հանրային կյանքի կարևոր նշանակություն ունեցող հարցերում պետք է ունենան խոսքի իրավունք: Օրինակ ցմահ ազատազրկում նախատեսող հանցագործությունների գործերով ժողովուրդը՝ ի դեմս ատենակալների, պետք է իրավունք ունենա որոշելու անձի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչքան էլ, որ այդ որոշումը մեղադրական իշխանության սերտախմբի (քրեական հետապնդման մարմինների) համար ցավագին լինի: Հասկանալի է, որ ծայրահեղ պոզիտիվիստական իրավաբանական վրա կառուցված իրավական, այդ թվում՝ կրթական համակարգում նման բառերը խորթ են հնչում, ընդհուպ՝ կարող են գնահատվել որպես դեմագոգիա...:

3. ՀՀ վճռաբեկ դատարանը և հասարակության մասնակցությունն արդարադատությանը

(a) ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը և այլ դատավորները

(1) Հենրիկ Դանիելյանի մոտեցումը: 2002թ. ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Հենրիկ Դանիելյանը հարցազրույցներից մեկում նշում է. «Երդվյալ ատենակալների ինստիտուտը նախատեսված է նաև մեր գործող Սահմանադրությամբ, ինչը, սակայն, մենք չենք կիրառում: Նկատի ունենալով մեր ազգային մենթալիտետը, հանրապետության փոքրությունը և բնակչության քանակը՝ շատերը պնդում են, որ մեզ մոտ երդվյալ ատենակալների ինստիտուտն արդյունավետ չի կարող գործել: Ես կարծում եմ, որ դատավորին, թեկուզ՝ պրոֆեսիոնալ դատավորին մենակ թողնելը չի կարող արդարադատության իրականացման երաշխիք դառնալ: Հանրությունն անպայման ինչ-որ կերպ պետք է մասնակցի արդարադատության իրականացմանը, որպեսզի ժողովրդի մեջ եղած կարծիքը, արդարության զգացումը գա և հանգրվանի դատարանում: Երդվյալ ատենակալների ինստիտուտը չափազանց բարդ մի համակարգ է, այն ներդնելը պահանջում է մեծ ծավալի աշխատանք: Մեզանում դժվարություն իրոք կարող է ծագել, քանի որ փոքր հանրապետություն

ենք, փոքր թվով ազգաբնակչություն ունենք, բարեկամ-ծանոթ կապերն այնքան շատ են, որ հույս դնել միայն ատենակալների անաչառության վրա, ճիշտ չի լինի»³²:

Մեծ հաշվով փորձառու դատավորի ասածներին ավելացնելու ոչինչ չունեմ, միայն նշեմ, որ ցանկացած նոր ինստիտուտ ներդնելուց հետո ծագում են բարդություններ, խնդիրներ, սակայն այդ խնդիրների նկատմամբ մեր վախերը չպետք է վիժեցնեն մարդու իրավունքների գաղափարը:

(2) Ելիզավետա Դանիելյանի պատճառաբանությունները: ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր Ե. Դանիելյանը թեկնածուական ատենախոսության մեջ նշել է. «Այսպիսի սերտ սոցիալական կապերով հասարակությունում, ինչպիսին Հայաստանում է, տվյալ ինստիտուտը չի կարող գործել որպես անկախ մարմին, հետևաբար, այդ ուղին ընդունելի չէ: Դատական համակարգի խնդիրների կարգավորման նպատակով 1995թ. արդեն իսկ այդ ինստիտուտի ներդրման փորձ արվել էր, սակայն վերը նշված պատճառներով այդ առաջարկությունները հանվեցին դատական բարեփոխումների փաթեթից: Այդ ինստիտուտի աննպատակահարմարության հիմնական պատճառաբանությունն այն էր, որ ՀՀ-ն փոքր երկիր է, և ցանկացած գործով դժվար է գտնել երդվյալների, ովքեր բարեկամական, ընկերական կամ այլ հարաբերություններ չունենան կողմերից որևէ մեկի հետ: Ներկայումս կրկին առաջարկվող այդ ինստիտուտի անհրաժեշտության վերաբերյալ հայեցակարգում որևէ հիմնավորում չի ներկայացվել ³³»: Չեմ կարող համաձայնել համալսարանական գործընկերոջս կարծիքի հետ, մասնավորապես այն հարցում, որ 2015թ. սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում պետք էր հատուկ հիմնավորել երդվյալ ատենակալների ինստիտուտի անհրաժեշտությունը: Բանն այն է, որ հասարակության պետական կառավարմանը մասնակցելու, մասնավորապես արդարադատությանը մասնակցելու իրավունքն ինքնին հիմնավորում չի պահանջում, այն իրավական և ժողովրդավարական պետությունների կարևորագույն սկզբունք է կամ մարդու իրավունք: Վայ

³² Հենրիկ Դանիելյան. Դատական նոր համակարգը՝ երեք տարի անց. Հարցազրույց: «Օրենք և իրականություն», № 8 (46) ապրիլ, 2002, էջ 2:

³³ Ելիզավետա Դանիելյան. Հայաստանում դատական իշխանության զարգացման տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրները (պատմատեսական և իրավական վերլուծություն): Թեկնածուական ատենախոսություն: Եր.: 2014, էջ 24:

այն հասարակությանը, որը կհասնի այնպիսի վիճակի կամ կվերադառնա այն ժամանակներին, որտեղ նորից պետք է հիմնավորել մարդու հիմնական իրավունքները, օրինակ՝ կյանքի իրավունքը, սեփականության իրավունքը և այլն: Առավել շատ հիմնավորման կարիք ունի այն, թե ինչու հանրային իշխանությունը չի կատարում իր պոզիտիվ պարտականությունը և չի ապահովում արդարադատությանը մասնակցելու մարդու իրավունքի իրականացումը:

(b) Քրեական պալատի նախագահները

(1) Միեր Խաչատրյանի պատմաիրավական մտորումները: Միեր Խաչատրյանը 1990թ. հրապարակված իր հոդվածներից մեկում նշում է, որ մեզ անհրաժեշտ է ընդօրինակել ԱՄՆ-ի օրենսդրությանը: 1791թ. ԱՄՆ-ի Սահմանադրությունում կատարված 6-րդ լրացման համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի պահանջելու, որ իր գործը քննվի անաչառ երդվյալների դատարանի կողմից: Նա այդ հոդվածում խոր ցավով է ներկայացնում, թե ինչպես խորհրդային իշխանությունը և Վ. Լենինը կազմալուծեցին երդվյալ ատենակալների ինստիտուտը: Նա նշում է, որ հեղափոխությունը հետևողական եղավ և իրոք ջախջախեց համամարդկային մեծագույն արժեքներից մեկը՝ երդվյալների դատարանը: Երդվյալների դատարանի ոչնչացման հետ վերացվեցին նաև մարդու իրավունքների պաշտպանության քրեադատավարական շատ ուրիշ երաշխիքներ: Մասնավորապես՝ արհամարհվեց փաստաբանը: Փաստաբանական ծառայությունը դարձվեց բյուրոկրատական ապարատի լծակներից մեկը, փաստաբանությունը դրվեց ստրկական վիճակում, արհամարհվեց փաստաբանի կարծիքը: Երդվյալ դատարանի վերացումով հիմք դրվեց կամայական դատարանի ստեղծմանը: 11.01.1918թ. բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետների համառուսաստանյան երրորդ համագումարում Վ. Լենինը նշեց. «Թող աղաղակեն, թե մենք առանց հին դատարանը բարեփոխելու՝ միանգամից այն հանձնեցինք փշրելու: Մենք դրանով ճանապարհ մաքրեցինք իսկական ժողովրդական դատարանի համար և այդ արինք ոչ այնքան ռեպրեսիաների ուժով, որքան մասսաների օրինակով աշխատավորների հեղինակությամբ, առանց ձևականությունների...»³⁴: 13.11.1989թ. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց «ԽՍՀ Միության և միութենական

³⁴Լենին Վ. Ի. Երկեր, 5-րդ հրատ., հ. 35, էջ 319: Մեջբերումն ըստ Մ. Խաչատրյանի վկայակոչված հոդվածի:

հանրապետությունների դատարանակազմության մասին օրենսդրության հիմունքները», որի 11-րդ հոդվածը սահմանեց. «Միութենական հանրապետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնց կատարման համար օրենքով նախատեսված է մահապատիժ կամ ազատազրկում տասը տարուց ավելի ժամանակով, ամբաստանյալի մեղավորության հարցը կարող է որոշվել երդվյալների դատարանի (ժողովրդական ատենակալների ընդլայնված կոլեգիայի) միջոցով: Վերջապես, 1917թ. դատարանի մասին թիվ 1 դեկրետից 72 տարի հետո օրենսդրությամբ հիշատակվեց երդվյալների դատարան անունը: Մեր հարազատ բյուրոկրատիան չէր կարող ըստ էության լուծել երդվյալների դատարանի ինստիտուտի հարցը, որովհետև դրանով կհակադրվեր Վ. Լենինի մշակած դատարանի մասին առաջին դեկրետի սկզբունքներին, որով ոչնչացվել էր երդվյալների դատարանը: Հենց դա էր պատճառը, որ կենտրոնը չհամարձակվեց միութենական օրենքով ստեղծել ու երդվյալների դատարան: Այն թողնվեց միութենական հանրապետությունների իրավասությանը³⁵:

(2) Դավիթ Ավետիսյանի խիզախ դիրքորոշումը և հուսադրող կանխատեսումները: 2015թ. սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծի քննարկման շրջանակներում ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների թեկնածու Դավիթ Ավետիսյանը արդարադատության իրականացմանը հասարկության ակտիվ և գործուն մասնակցությունը համարում էր հանրության վստահության բարձրացման նախադրյալ: Նա առաջարկել էր կյանքի կոչել երդվյալ ատենակալների ինստիտուտը, ինչն էական դրական արդյունք է արձանագրել հարևան Վրաստանի Հանրապետության դատական իշխանությունում³⁶: Մեկ այլ հարցազրույցի ընթացքում Դ. Ավետիսյանը նշել է. «Զարգացած իրավական ավանդույթներ ունեցող երկրներում և հատկապես այն երկրներում, որոնցից մենք օրինակ ենք վերցրել, հասարակությունն այս կամ այն

³⁵ Մհեր Խաչատրյան. «Անկախ դատարան», «Երեկոյան Երևան» 26.09.1990թ., Հոդվածը տպագրվել է «Քրեական դատավարության տեսության և պրակտիկայի հարցեր: Եր.: 1996» աշխատանքում:

³⁶ Դավիթ Ավետիսյան. Հանրությունը պետք է ակտիվ դերակատարություն ունենա արդարադատություն իրականացնելու գործում: <http://blognews.am/arm/news/162167/davit-avetisyan-hanrutuyun-petq-e-aktiv-derakatarutyun-unena-ardaradatutyun-irakanacnelu-gortsum.html> (03.11.2017).

կերպ մասնակցում է արդարադատության իրականացմանը: Օրինակ՝ շատ կուզենայի, որ Սահմանադրության նախագծում տեղ գտներ երդվյալ ատենակալների համակարգը կամ էթե ոչ երդվյալ ատենակալներ, ապա գոնե ասիզների համակարգը: Մրա հակառակ դատողությունն այն է, որ մենք փոքր երկիր ենք, իրար ճանաչում ենք: Գուցե երդվյալ ատենակալների համակարգը մեր երկրում չաշխատի, գուցե այս դատողությունը ինչ-որ առումով ուշադրության արժանի է, բայց նաև ես դրան հակափաստարկներ ունեմ: Օրինակ՝ մեր հարևան երկրում՝ Վրաստանում, այդ նույն համակարգը ներդրված է, և երդվյալ ատենակալների կողմից քննարկվում են երկու կատեգորիայի հանցագործությունները՝ ցմահ ազատազրկում նախատեսող հանցագործությունները և բարձրաստիճան պաշտոնյաների կողմից կատարվող հանցագործությունները: Եթե հանրությունը չի վստահում դատարաններին, ապա վստահություն ձեռք բերելու միջոցներից մեկն այն է, որ բարձրաստիճան պաշտոնյաների վերաբերյալ գործերի քննությունը հանձնենք հասարակության մասնակցությամբ իրականացվող դատարանին, որը կարող են լինել երդվյալ ատենակալները: Գուցե այս գաղափարը ներկայումս խորթ է թվում, բայց հույս ունեմ, այնուամենայնիվ, մի օր դրան գնալու ենք³⁷: Անկասկած, դատական իշխանության փիլիսոփայությունը կրողի, դատական համակարգից ծնված (ըստ իր խոսքերի) և համակարգի ներքին խնդիրներին քաջատեղյակ անձի՝ Դավիթ Ավետիսյանի փաստարկներն ունեն խոր արմատներ, ուստի վստահ եմ, որ նրա՝ «մի օր դրան գնալու ենք» կանխատեսումն իրականություն է դառնալու:

(3) Մերժիկ Ավետիսյանի ընդհանրական պատասխանը:

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Ավետիսյանը հարցազրույցներից մեկում նշել է, որ երդվյալ ատենակալների մասնակցությամբ արդարադատության իրականացումը մի շարք պատճառներով նպատակահարմար չի համարում: Դրա մասին է վկայում նաև միջազգային փորձը³⁸: Հասկանալի է, որ պատասխանը շատ ընդհանրական է, նշված չեն աննպատակահարմարության պատճառները: Թերևս լրագրողին

³⁷ Դավիթ Ավետիսյան. «Ես ափսոսում եմ, որ երդվյալ ատենակալների ինստիտուտը դուրս մնաց Սահմանադրության նախագծից»: <https://www.youtube.com/watch?v=2u1f-Uk372c>, նյութը տես՝ 0:50 րոպեից:

³⁸ Аветисян С. С. Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Изб. труды. Ер.: Изд-во «Зангак», 2016. С. 784.

տված հարցազրույցում դժվար է մասնագիտական հարցերին խորությամբ անդրադառնալ, սակայն ինձ համար բաց է մնացել, թե այդ որ միջազգային փորձն է, որը վկայում է երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրման աննպատակահարմարության մասին:

4. Փաստաբանական հանրությունը

(a) Փաստաբանների պալատի ինտերսոլյունը

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 20.07.2015թ. թիվ 206-Լ որոշմամբ ստեղծված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ մասնագիտական կարծիք ներկայացնող ՀՀ փաստաբանների պալատի աշխատանքային խումբը 03.09.2015թ. հրապարակել էր ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-ին, 2-րդ, 7-րդ և 8-րդ գլուխների վերաբերյալ Աշխատանքային խմբի կողմից 31.08.2015թ. հաստատված մասնագիտական կարծիքը: Պալատի կարծիքում նախատեսված չէ երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծման վերաբերյալ առաջարկություն: Կարծիքում նշված է. «Եթե պետությունը ցանկանում է ունենալ անկախ, անկողմնակալ, անաչառ արդարադատություն իրականացնող դատական համակարգ, ապա պետք է ձգտի հնարավորինս կատարելագործել և ուժեղացնել փաստաբանությունը՝ տալով նրան լիարժեք անկախություն և ապահովելով անհրաժեշտ երաշխիքներով»³⁹: Պետությունից անկախություն հայցելու փոխարեն, երևի թե պետք էր գիտակցել այն հանրահայտ ճշմարտությունը, որ փաստաբանական ինստիտուտը կայանում և զարգանում է իրական մրցակցային դատավարություններում, իսկ փաստաբանների արդյունավետ գործունեության համար պարարտ հող է ստեղծվում երդվյալ ատենակալների մասնակցությամբ մրցակցային դատավարության պայմաններում, որտեղ «ատենակալները, ի տարբերություն դատական մարմինների, ազատ են օրենքի տառի բացարձակացումից: Նրանց մոտ գրեթե բացակայում է ունիվերսալ իրավական մտածողության մասին հիպերբոլացված պատկերացումը, նրանք ավելի ռեֆորմիստական ձևով են մոտենում օրենքի մեկնաբանմանը, պարզաբանմանը»⁴⁰ : Այս

³⁹ http://advocates.am/images/handznazhoghovner/sahmanadrakan_31082015/Kartcik-Sahmanadrutyun-verjnanan_compress_ed.pdf (07.11.2017):

⁴⁰ Юридическая социология. Учебник для вузов. М.: Изд. НОРМА, 2000. С. 213.

կարևորագույն հարցի վերաբերյալ Փաստաբանների Պալատի ինտեր-տույությունը որևէ կերպ հասկանալի չէ: 2015թ. սահմանադրական փոփոխությունների ընթացքում Պալատը՝ իր մեծ համայնքով, բաց թողեց պատմական շանսը, երբ հնարավոր էր ջանքերը միավորել ՀՀ վճռաբեկ դատարանի հետ, որի ղեկավար կազմը (Դ. Ավետիսյանը) նույնպես կողմնակից էր այս ինստիտուտին, և երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծման հարցը դարձներ հանրային պահանջ:

(b) Էդմոն Մարուքյանի մտավախությունը

ՀՀ ազգային ժողովի պատգամավոր, ՀՀ փաստաբանների պալատի նախկին անդամ Էդմոն Մարուքյանն իր հարցազրույցներում նշում է, որ շատ լավ է վերաբերվում երդվյալ ատենակալների ինստիտուտի գաղափարին, սակայն այս պահին նա մտավախություններ ունի և կարծում է, որ կարելի է քննարկել Հայաստանում դրա հնարավոր ներդրման հարցը, որպես տարբերակ թողնել սեղանին, չբացառել, բայց միևնույն ժամանակ հասկանալ, թե ներդնելու դեպքում ինչպես դա կազմակերպել: «Ինչպես կազմակերպել, որ դա չդառնա նոր խնդիր՝ առանց այդ էլ բազմաթիվ խնդիրներով ծանրաբեռնված մեր դատական իշխանության համար: Այո՛, քաղաքացիական գիտակցության, իրավագիտակցության բարձրացման, քաղաքացիական պատասխանատվության առումով շատ կարևոր ինստիտուտ է, սակայն հաշվի առնելով մեր հետխորհրդային փորձը, մեր ազգային ավանդույթները, բարեկամական, ընտանեկան շատ սերտ կապերը, դժվարանում եմ այս հարցով միանշանակ դիրքորոշում արտահայտել: Նաև ելնելով այն հանգամանքից, որ հարևան Վրաստանում, որը մեր նման ավանդույթներով երկիր, ժողովուրդ է, այդ ինստիտուտը ներդրված է, պատգամավորը կարծում է, թե շատ կարևոր կլինի առաջին հերթին ուսումնասիրել վրացական փորձը, հասկանալ դրա դրական և բացասական կողմերը»⁴¹: Է. Մարուքյանի (ով քաջատեղյակ է ամերիկյան արդարադատության համակարգին) մտավախությունները փարատելու համար պարզապես մեջբերենք փաստաբան Հայկ Ալումյանի դիրքորոշումը:

⁴¹ Էդմոն Մարուքյան. «Երդվյալ ատենակալների ինստիտուտի գաղափարին շատ լավ եմ վերաբերվում, բայց մտավախություններ ունեմ»: 26/05/2014: <http://edmonmarukyan.com/1363/> (03.11.2017).

(c) Հայկ Ալումյանի՝ երդվյալ ատենակալների ինստիտուտը վերակենդանացնելու ցանկությունը

Փաստաբան Հայկ Ալումյանը հարցազրույցներում երդվյալ ատենակալի ինստիտուտի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը: «Ես կուզեմայի, որ վերադարձվեր սահմանադրական այն դրույթը, որ գոյություն ունեի 1995թ. Սահմանադրության մեջ, որտեղ ասված էր, որ օրենքով սահմանված դեպքերում քրեական դատավարությունն իրականացվում է երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Մա շատ կարևոր դրույթ է, և վաղ թե ուշ մենք կգանք այդ մոդելին, գոնե վաղ թե ուշ կգանք այն գիտակցմանը, որ այդ մոդելն անհրաժեշտ է: ԱՄՆ-ում, երբ մենք ուսումնասիրում էինք դատարանների, փաստաբանների գործունեությունը ու առանձնահատկությունները, դատավորներից մեկը մի միտք հայտնեց, որն իմ մեջ տպավորվեց, մյուս դատավորները բոլորը համաձայնեցին. եթե մեզ մոտ չլինեին երդվյալներ, դատավորներից յուրաքանչյուրը կարճ ժամանակ անց դատավարության ժամանակ կդառնար երկրորդ մեղադրող: Դա օբյեկտիվ պրոցես է. երբ որ քրեական գործեր քննող դատավորը քիչ-քիչ տեղափոխվում է մեղադրանքի կողմ, դառնում երկրորդ մեղադրողը, եթե դատական պրոցեսում չեն լինում երդվյալ ատենակալներ: Այդ ինստիտուտը շատ կարևոր է քրեական դատավարությունում: Ճիշտ է, դա չի նշանակում, որ բոլոր գործերը պետք է քննվեն երդվյալների մասնակցությամբ և անկախ մարդու ցանկությունից: Ոչ, այդտեղ կան մեխանիզմներ. նախ՝ ոչ բոլոր գործերի դեպքում, և եթե մարդը ցանկանում է, որ իր գործը քննվի սովորական կազմով՝ առանց երդվյալների, ապա դա էլ իր իրավունքն է: Բայց երդվյալների ինստիտուտը պետք է լինի, մարդը պիտի կարողանա ընտրել և մարդը պիտի հնարավորություն ունենա ոչ թե չհնավնիկներին ապացուցել, որ ինքը մեղավոր չէ, այլ հանրությանը: Վրաստանն ունի նույն առանձնահատկությունները, ինչ և Հայաստանը: Վրաստանում ինչպե՞ս է աշխատում, աշխատում է, չէ: Մենք, ցավոք, մեր մասին ավելի վատ կարծիք ունենք, քան թե ուրիշ ազգերը՝ մեր մասին: Հայաշատ Գլենդելում դատավարության ժամանակ որևէ մեկի մտքով չի անցնի ասել, որ երդվյալների մեջ հայ չընտրենք, որովհետև նրանց մեջ կապերը մի քիչ շատ են: Մեզ վստահում են, մեր մենթալիտետի մասին այդքան վատ կարծիք չունեն: Բացի այդ, դահլիճ մտնելուց հետո ատենակալները կերպարանափոխվում են. երբ ստանձնում են պատասխանատվությունը՝

որոշելու մարդու ճակատագիրը, բոլորովին ուրիշ կատեգորիաներով են սկսում մտածել: Եվ, ի վերջո, հասարակությունը, եթե չարագործին արդարացնի, թող գնա նրա հետ էլ ապրի»⁴²: Ավելացնելու կամ մեկնաբանելու ոչինչ չունեմ, պարզապես վերահաստատեմ, որ գործ ունենք ոչ այնքան փաստաբանի, որքան խոշոր իրավապաշտպանի հետ:

(d) Փաստաբանական խմբի կարծիքը և երդվյալ ատենակալների ինստիտուտի մոտացությունը

2015թ. Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության նախագծի վերաբերյալ 55 փաստաբան ներկայացրել են մասնագիտական Կարծիք⁴³, որտեղ երդվյալ ատենակալների մասին առաջարկությունը նույնպես բացակայում է: Փաստաբանների այս խմբում ընդգրկված էին հանրությանը հայտնի և քրեական գործերով մասնագիտացված մի շարք փաստաբաններ, և զարմանալի է, որ այս կարծիքում երդվյալ ատենակալների մասին որևէ առաջարկ ներկայացված չէ: Հույս ունեմ, որ փաստաբանների այս խմբի իներտության հիմքում դրված չէ երդվյալ ատենակալների ինստիտուտի դեմ բերվող շարժումային փաստարկները:

5. Ավտորիտար մտածողության և երդվյալ ատենակալների ինստիտուտի անհամատեղելիությունը

(a) Ատենակալների ինստիտուտը՝ ավտորիտար մտածողության ոլիտերիա թշնամի

Երդվյալ ատենակալների համակարգն առաջին անգամ կիրառվել է Հին Հունաստանում, ապա՝ Հին Հռոմում, որտեղ ատենակալների թիվը մեկ դատավարության ընթացքում հասնում էր հարյուրների: Սակայն 20-րդ դարում երդվյալ ատենակալների համակարգը վերացվեց մի շարք բռնակալական ու ինքնակալական վարչակարգերի, այդ թվում՝ Խորհրդային Միության, Ֆրանկոյի կառավարության⁴⁴:

⁴² Հայկ Ալումյան. Դատավորը դառնում է երկրորդ մեղադրող, եթե դատական պրոցեսում չեն լինում երդվյալ ատենակալներ: <https://www.pastinfo.am/hy/news/2014/03/18> (03.11.2017).

⁴³ <http://www.lex.am/docs/lawyers%20opinion.pdf> (06.11.2017).

⁴⁴ ԱՄՆ-ը իրախուսում է Հայաստանում երդվյալ ատենակալների համակարգի ներդրումը: <https://www.azatutyun.am/a/25469124.html> (11.11.2017).

Իրավունքի պատմության մասնագետները փաստում են, որ ֆաշիստները, իշխանության գալով, վերացրեցին գերմանական դատարանի ժողովրդավարական կազմակերպման բոլոր մնացորդները: Երդվյալ ատենակալների դատարանը վերջնականապես լուծարվեց, իսկ շեֆֆենների մասնակցությամբ քննվող գործերն էապես կրճատվեցին, և ընդարձակվեցին գործերը միանձնյա քննող դատարանի իրավունքները:

Երդվյալ ատենակալների ինստիտուտ նախատեսված չէր նաև ֆաշիստական Իտալիայում, իսկ Ֆաշիստական Ճապոնիայում իրավիճակը փոքր-ինչ այլ էր: Մինչև 1923թ. Ճապոնիայում երդվյալ ատենակալների ինստիտուտ նախատեսված չէր, բոլոր դատարանները կազմված էին թագավորական դատավորների, այսինքն՝ արդարադատության նախարարի կողմից նշանակված չինովնիկներից: «Երդվյալ ատենակալների մասին» օրենքն ընդունվեց 1923թ-ին և գործողության մեջ դրվեց 1928թ-ին: Երդվյալ ատենակալների ինստիտուտը նախատեսվեց որպես ժողովրդավարական շարժմանը զիջում: Հիմնադրելով երդվյալ ատենակալների ինստիտուտ՝ ճապոնական միապետը գտավ հարցի այնպիսի լուծում, որը ձեռնտու կլիներ ցանկացած ֆաշիստական պետությանը: Բանն այնն է, որ երդվյալ ատենակալների վերդիկտը պարտադիր չէր թագավորական դատարանի համար: Վերջինս կարող էր բեկանել այն և նշանակել երդվյալ ատենակալների նոր կազմ և կրկին չհամաձայնել ատենակալների այդ կազմի և նրա վերդիկտի հետ և այդպես գործել այնքան ժամանակ, մինչև որ կստանար դեկավարող խառնախմբի համար ցանկալի վերդիկտ:

Բացի այդ, երդվյալ ատենակալների ինստիտուտին դիմելը մեղադրյալի համար առաջացնում էր լրացուցիչ դատական ծախսեր, որոնք կապված էին ատենակալների հետ: Մեղադրյալն այս դեպքերում զրկվում էր դատավճիռն ըստ էության վերաքննության կարգով բողոքարկելու իրավունքից: Երդվյալ ատենակալների ինստիտուտն այս ամենով որակազրկվեց, և հազվադեպ էին նրան դիմում⁴⁵:

⁴⁵Всеобщая история государства и права. Учебник для вузов в двух томах. Том 2. Новое время. Новейшее время. М.: Зерцало-М, 2011. С. 617-622.

(b) Վ. Լենինը և ռուսական երդվյալ ատենակալների ինստիտուտի կազմալուծումը

Ինչպես նշվեց՝ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը 1864 թվականից Ռուսաստանում նույնպես գործում էր երդվյալ ատենակալների դատարանը: 22.11.1917թ. ՌԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդն ընդունեց «Դատարանի մասին» նո. 1 դեկրետը, որով վերացվեց գոյություն ունեցող դատական ողջ համակարգը: Նշված դեկրետի ընդունումից մի քանի օր հետո՝ դեկտեմբերի 1-ին, «Պրավդան» տպագրեց Ա. Լուսաչարսկու շահագործողական իրավունքի և դատարանի ոչնչացման և դրանց փոխարեն նոր հիմնարկություններ ստեղծելու անհրաժեշտության մասին» հոդվածը:

Ռուս իրավաբանները բացահայտորեն դեմ արտահայտվեցին նշված դեկրետին և Ա. Լուսաչարսկու հոդվածին: Պետրոգրադի երդվյալների խորհուրդն արտահերթ ժողով հրավիրեց և կոչ արեց բոլոր դատարաններին՝ չդեկավարվել դատարանի մասին դեկրետով⁴⁶: Սակայն հեղափոխությունը հետևողական եղավ և իրոք ջախջախեց համամարդկային մեծագույն արժեքներից մեկը՝ երդվյալների դատարանը:

Այդ «հաղթանակի» մասին 1918 թվականի հունվարի 11-ին բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետների համառուսաստանյան երրորդ համագումարում Վ. Լենինը նշեց. «Թող աղաղակեն, թե մենք առանց հին դատարանը բարեփոխելու՝ միանգամից այն հանձնեցինք փշրելու: Մենք դրանով ճանապարհ մաքրեցինք իսկական ժողովրդական դատարանի համար և այդ արինք ոչ այնքան ռեպրեսիաների ուժով, որքան մասսաների օրինակով աշխատավորների հեղինակությամբ, առանց ձևականությունների...»⁴⁷: Վ. Լենինը կարողացավ երդվյալ դատարանները ջախջախել ընդամենը 40 օրում:

Ինչու՞ էր Վ. Լենինը դեմ երդվյալների դատարանի ինստիտուտին: Մ. Խաչատրյանը դա բացատրում է հետևյալ կերպ. «1887թ. Պետերբուրգում կազմակերպվեց «Նարոդնայա Վոյա» տեռորիստական ֆրակցիան, որը որոշել էր մարտի 1-ին սպանել Ալեքսանդր 3-րդին, բայց այդ որոշումը ոչ միայն չիրագործվեց, այլև փողոցում ձերբակալվեցին ռումբերով զինված ահաբեկիչները, այդ թվում՝ Վ. Լենինի եղբայրը: 08.05.1887թ. Վ. Լենինի եղբայրն իր մյուս չորս ընկերների հետ կախաղան բարձրացվեց:

⁴⁶ Организация суда и прокуратуры в СССР. М.:1976. С. 67-68.

⁴⁷Լենին Վ. Ի. Երկեր, 5-րդ հրատ., Հ. 35, էջ 319: Մեջբերումն ըստ Մ. Խաչատրյանի հոդվածի:

Հավանական է, որ Վ. Լենինը երդվյալների դատարանից առաջին բացասական տպավորությունն ստացել է եղբոր դատավարության ժամանակ, երբ երդվյալները նրան ճանաչեցին մեղավոր: Հոգեբանական տեսակետից դա հասկանալի է»: Մ. Խաչատրյանը նշում է՝ այն, որ Վ. Լենինին քաջ հայտնի էր երդվյալների դատարանի առավելությունները, ապացուցված է հենց նրա պրակտիկ փաստաբանական գործունեությամբ: Ինչպես հայտնի է, Վ. Լենինը 1892-1893 թվականներին Սամարայում զբաղվել է փաստաբանական գործունեությամբ: Իր մասնակցած 14 քրեական գործերից հինգով հասել է ամբաստանյալների արդարացմանը⁴⁸: 19.01.1905թ. Ե. Ստասովային և Մոսկվայի բանտում գտնվող ընկերներին հղած նամակում Վ. Լենինը նրանց խորհուրդ է տալիս դատարանում. «Վերցնել միայն խելացի փաստաբաններ, ուրիշները հարկավոր չեն»: Այն փաստը, որ Վ. Լենինը խորհուրդ էր տալիս վերցնել միայն խելացի փաստաբաններ, արդեն իսկ խոսում է այն մասին, որ դատարանը գնահատել է փաստաբանի գիտելիքները և հաշվի է նստել նրա խելացիության հետ: Վ. Լենինի կողմից երդվյալների դատարանի ոչնչացման պատճառը պետք է բացատրել նաև նրանով, որ երդվյալների դատարանի գոյության պայմաններում նա իր քաղաքական հակառակորդների նկատմամբ չէր կարող կիրառել ռեպրեսիաներ⁴⁹:

(c) Մեղադրական իշխանության կոհորտան

Երդվյալ ատենակալների ինստիտուտին, որպես կանոն, դեմ են լինում մեղադրական գործունեությամբ զբաղվող պաշտոնատար անձանց խումբը (քրեական հետապնդման մարմինները): Մեղադրական իշխանությունը, ով սովոր է քրեական արդարադատության համակարգում գործել առանց որևէ լուրջ հակակշռի և իրենց ձևավորած բոլոր մեղադրանքները, առանց լուրջ խոչընդոտների, հասցնել տրամաբանական ավարտին՝ մեղադրական դատավճռի կայացմանը, բնականաբար, դեմ են այս ժողովրդավարական ինստիտուտին, քանի որ երդվյալ ատենակալների նախատեսմամբ նրանք դատավարության ընթացքում կկորցնեն իրենց հարմարավետության զգացողությունը: Չէ որ երդվյալ ատենակալների դատարանում մեղադրանք պաշտպանելը պահանջում է լրա-

⁴⁸ Стерник И. Б. Юридическая деятельность В. И. Ленина: отдельные стороны аспекты. Автореф. дисс. докт. юрид. наук. Л., 1974 <http://law.edu.ru/book/book.asp?bookID=113579> (06.11.2017).

⁴⁹ Մենը Խաչատրյան. «Անկախ դատարան», «Երեկոյան Երևան» 26.09.1990թ., Հոդվածը տպագրվել է «Քրեական դատավարության տեսության և պրակտիկայի հարցեր: Եր.: 1996» աշխատանքում:

ցուցիչ ունակություններ, հմտություններ, հռետորական մեծ վարպետություն, քրտնաջան նախապարաստություն և այլն: Մինչդեռ պրոֆեսիոնալ դատարանում, շատ հաճախ, մեղադրական ճառասանությունը սահմանափակվում է արարքի հանրային վտանգավորության մասին քրեական իրավունքի դասագրքերից արտատպված մի քանի շարժնային մտքերի և դատարանում հրապարակված նախաքննական ցուցմունքների մեխանիկական ընթերցումով, ընդ որում՝ այնպիսի ընթերցանություն, որը չի լսում ոչ միայն դատավորը և վարույթի մյուս կողմը, այլև իր իսկ ընթերցածը չի լսում նաև այն ընթերցող դատախազը: Երդվյալ ատենակալների առկայության պարագայում նման դատախազի գործն էապես կբարդանա, նա պետք է մեծ ջանքեր գործադրի մեղադրանքի պաշտպանությանը պատշաճ նախապատրաստվելու համար: Հասկանալի է՝ բարդ գործ է, ամեն մարդու համար չէ: Ուստի պետք է ամեն գնով դեմ լինել այս «գլխացավանքին»:

Օրինակ՝ Ռուսաստանում 1997թ. լույս տեսավ ՌԴ գլխավոր դատախազությանը կից Գիտահետազոտական ինստիտուտի տնօրենի տեղակալ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Բոյկովի՝ «Երրորդ իշխանությունը Ռուսաստանում...» վերտառությամբ գիրքը, որտեղ հեղինակը քննադատում է նաև երդվյալ ատենակալների ինստիտուտը (էջեր 131-160): Չենք անդրադառնա այդ, այսպես կոչված, քննադատությանը, քանի որ պատմությունն արդեն իսկ ապացուցել է դրանց անհիմն լինելը, պարզապես նշենք, որ 1998թ. «Իզվեստիա» թերթում ՌԴ գիտությունների ազգային ակադեմիայի գիտաշխատող, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Լարինը տպագրեց «Գլխավոր դատախազության գլխավոր տեսաբանը պաշտպանում է նեոֆաշիստներին» վերտառությամբ հոդվածը, որտեղ մեծ համբավ ունեցող դատավարագետն անդրադառնում է նաև երդվյալ ատենակալների ինստիտուտի վերաբերյալ Բոյկովի քննադատությանը...: Կարծում ենք, որ Ա. Լարինի հոդվածի վերտառությունը խոսուն է, իսկ դրա բովանդակությունը գիտական բնույթի աշխատանքների քննարկման նյութ է, որն այս ձեռնարկի խնդիրներից չէ:

Ռուսական իրավագիտության մեջ նշվում է, որ երդվյալ ատենակալների ինստիտուտի նկատմամբ բացասական վերաբերմունքը մեծամասամբ պայմանավորված է հասարակության, ինչպես նաև իրավաբանների արդարացման ինստիտուտի նկատմամբ բացասական

վերաբերմունքով: Հենց արդարացման դատավճիռների բարձր տոկոսի հետ է կապված երդվյալ ատենակալների ինստիտուտի նկատմամբ քննադատական մոտեցումները⁵⁰:

Այն հարցին, թե ինչպես է վերաբերվում ՀՀ Սահմանադրության հայեցակարգի նախագծում նշված երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրմանը, 2013-2016թ. ՀՀ գլխավոր դատախազ, սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամ Գ. Կոստանյանը պատասխանել է. «Հայաստանի հասարակության շրջանում բարոյական պարտավորվածության զգացումը չափազանց բարձր է: Անկեղծ ասած, ես կարծում եմ, որ մեր հասարակությունն առայժմ պատրաստ չէ այդ ինստիտուտի ներդրմանը: Ժամանակ պետք է անցնի, որ մեր իրավագիտակցության մակարդակը բարձրանա այնքան, որ բարոյական կանոնները անձնական, սուբյեկտիվ պարտավորությունը ստորադասվի հասարակական շահին»: Նրա պնդմամբ՝ երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրմամբ բացարձակ արդարադատություն չենք կարող ունենալ: Հետևաբար, գլխավոր դատախազի խոսքով՝ այդ համակարգին անցնելը շատ վաղ է⁵¹:

Ես եղել եմ դատախազ և դատարաններում պաշտպանել եմ մեղադրանք: Բիարկե, կյանքը հարուստ է իր շերտերով, և որևէ մեկս երաշխավորված չենք պաշտոնի կամ աշխատանքային բնույթով պայմանավորված գիտակցության ձևախեղումներից... Բայց, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս, իմ ուսանողների հնչեցրած հարցի պատասխանը եղել է հստակ և որոշակի՝ ժողովուրդն ունի անվերապահ կոլեկտիվ բնական իրավունք՝ մասնակցելու արդարադատության իրականացմանը:

⁵⁰УриловЮ. Ю. Проблемы эффективности оправдания судом с участием присяжных заседателей. Журнал российского права, № 2, 2009. С. 84.

⁵¹ Պետրոս Կոստանյան. Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրմամբ բացարձակ արդարադատություն չենք կարող ունենալ: 30/05/2014:<https://www.panorama.am/am/news/2014/05/30/gen-prosecutor/275596> (03.11.2017).

(d) Փոքր մասշտաբի «լենինները» և երդվյալ ատենակալների ինստիտուտի վիժեցումը

(1) **Վիժեցման առաջին փուլը.** Երդվյալ ատենակալների մասին 1995թ. Սահմանադրության նորմի «սպանությունը»: Ինչպես նշվեց, 1995-2005թթ. առկա էր մոտեցում, որ ՀՀ 1995թ. Սահմանադրությունը երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծումը թողել է ընթացիկ օրենսդրության հայեցողությանը: Որպեսզի ոչ իրավաբան ընթերցողի համար առավել պարզ լինի, փորձեմ կատարել 1995թ. Սահմանադրության որոշ նորմերի համեմատություն, որից հստակ երևում է, թե օրենսդիրն այս կամ այն հարցով երբ էր պարտավոր օրենք ընդունել, և որ դեպքում նման հայեցողություն ուներ:

Օրենսդրի համար հայեցողություն նախատեսող նորմերից էր, օրինակ, 1995թ. ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը, որի համաձայն՝ օրենքը *կարող է* նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր (ընդգծումը՝ հեղ.): Այս դեպքում հստակ է, որ օրենսդիրն ունի հայեցողություն որոշել՝ նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր, թե՞ ոչ:

Օրենսդրի համար օրենք ընդունելու իմպերատիվ պահանջ նախատեսող նորմերից էին՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարման կարգը *սահմանվում է* օրենքով (14-րդ հոդված), բժշկական օգնության և սպասարկման կարգը սահմանվում է օրենքով (34-րդ հոդված), *օրենքով նախատեսված դեպքերում* իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար (40-րդ հոդված) և այլն: Հատկապես վերջին օրինակի ձևակերպումը համեմատենք 1995թ. ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի ձևակերպման հետ՝ **օրենքով նախատեսված դեպքերում** իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար, **և օրենքով նախատեսված դեպքերում** դատավարությունն իրականացվում է երդվյալների մասնակցությամբ: Արդյոք որևէ մեկը կարո՞ղ էր ասել, թե օրենսդիրն ունի հայեցողություն նախատեսել կամ չնախատեսել անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու դեպքեր: Չեմ կարծում: Ակնհայտ է, որ օրենսդիրը պարտավոր էր հիմնել անվճար իրավաբանական օգնության ինստիտուտ և որոշեր, թե որ դեպքերում պետք է տրվի անվճար իրավաբանական օգնություն: Այդ դեպքում ինչպե՞ս ստացվեց, որ ձևակերպումներով շատ նման 1995թ. Սահմանադրության 40-րդ հոդվածը և 91-րդ հոդվածը մեկնաբանվեցին էսպես տարբերվող ձևերով

և երդվյալ ատենակալների դեպքում ասվեց, որ օրենսդիրն է որոշում այդ ինստիտուտը նախատեսել, թե ոչ:

Թերևս ՀՀ ազգային ժողովի սահմանադրական պարտականությունը՝ որպես հայեցողական լիազորություն, կարող էր մեկնաբանել ճյուղային իրավունքի այն մասնագետը, ով իրավական կյանքին նայում է «դռան դիտանցքից», մինչդեռ, երբ քննարկվող սահմանադրական նորմը մեկնաբանում է իրավունքի մեթոդաբանը (օրինակ՝ Շ. Խաչատրյանը), ապա մեկնաբանության արդյունքը լիովին այլ է լինում: ՀՀ օրենսդիրը ոչ թե *կարող էր* երդվյալ ատենակալների մասին օրենք ընդունել, այլ *պարտավոր էր* ընդունել օրենք, որը կսահմաներ երդվյալ ատենակալների մասնակցության վերաբերալ գործերը (դեպքերը): Դա էր սահմանադրի (ժողովրդի) պահանջը օրենսդիրին, որն այդպես էլ չիրագործվեց:

(2) Վիժեցման երկրորդ փուլը. Երդվյալ ատենակալները միայն ցածր կամ բարձր իրավագիտակցության պայմաններում. Հայ ժողովուրդը միջակություն: Երդվյալ ատենակալների ինստիտուտի վիժեցման երկրորդ փուլն այն էր, երբ նշվեց՝ «երդվյալների ինստիտուտն արդյունավետ կարող է գործել հասարակության զարգացման երկու աստիճաններում: Առաջին, երբ հասարակության մեջ իրավագիտակցության մակարդակը բավականին ցածր է, և երկրորդ, բարձր իրավագիտակցության պայմաններում, երբ քաղաքացիական պարտքը վեր է դասվում ազգակցական, արյունակցական և այլ կապերից: Մենք միջին մակարդակում ենք»: Այս փաստարկի անկարողությունը կարելի է հիմնավորել անկախության տարիների ընթացքում Հայ հասարակության կառուցվածքում տեղի ունեցած որակական փոփոխությունների՝ նույնիսկ մակերեսային դիտարկմամբ, Անկախության Մերնդի գոյությանը:

6. Սերունդների միջև հակասություն, թե՛ խզվածություն

(a) Ներկա սերունդը ճանապարհ է հարթում հաջորդող սերնդի համար. Նրանց սիներգետիկան

Գերմանացի սոցիոլոգ Կ. Մանգեյմն նշում էր, որ սերունդները բնութագրվում են որոշակի «դրությամբ», յուրահատուկ «փոխկապվածությամբ» և հայտնի «միասնությամբ»: Յուրաքանչյուր սերունդ ունի իր ժամանակային չափելիությունը և պատմամշակութային տարածությունը: Սերունդների հերթափոխը համապարփակ գործընթաց է, որը հիմնված է մարդկային կյանքի կենսաբանական ռիթմի վրա, որի հետևանքով մշակութային գործընթացներում ի հայտ են գալիս նոր մասնակիցներ, այն ժամանակ, երբ այդ գործընթացի հին դերակատարներն աստիճանաբար անհետանում են: Յուրաքանչյուր սերնդի անդամը կարող է գործել պատմական գործընթացի՝ ժամանակագրական առումով սահմանափակ հատվածում, և այդ պատճառով անհրաժեշտ է մշտապես փոխանցել կուտակված մշակութային ժառանգությունը⁵²:

Սերունդների սիներգետիկան ունի երկակի նշանակություն: Ներկա սերունդը, որպես կանոն, ճանապարհ է հարթում ապագա սերնդի համար, ներկա սերունդն իր վրա է վերցնում ժամանակի հարվածներ, անցնում պայքարի բարդ գործընթացը՝ հաջորդող սերունդների կենսագործունեության համար ստեղծելով բարենպաստ պայմաններ: Այսպես՝ իրավունքի փիլիսոփա Բ. Չիչերինը ներկայացնում է այն իրավիճակը, երբ ներկա սերունդը ճանապարհ է բացում հաջորդող սերունդների համար՝ դրանով իսկ բացառելով նրանց միջև հավասարությունը: «Եթե նույնիսկ պատկերացնենք, որ մարդկությունը վերջապես հասել է իդեալական երջանկության, որը հավասարապես տարածվում է բոլորի վրա, միննույն է, հետագա սերունդները նախորդ սերունդների համեմատությամբ կլինեն արտոնյալ: Նրանց բաժին է ընկել ավելի շատ երջանկություն, մարդկային նշանակության ամբողջական իրականացում, սակայն ինչ է տեղի ունեցել նրանց նախորդների հետ, ովքեր ճանապարհ են հարթել նոր սերնդի համար, ինչի համար են եղել այդ բոլոր տառապանքները և արցունքները, ինչի համար էին այդ

⁵² Mannheim K. The Problem of Generations. Essays on the Sociology of Knowledge. London, 1952. P. 292. Цит. по - Глогов М. Б. Поколение как категория социологии. Социологические исследования. 2004. № 10. <http://ecsocman.hse.ru/data/295/764/1231/005.GLOTOV.pdf> (29.10.2017).

ճնշումները և աղքատությունը, որոնք կրել են, որպեսզի ինչ-որ ուրիշի համար լավ լինի: Եթե ենթադրենք, որ զարգացման ավարտին մարդն ունակ է հասնել իր առաքելությանը, ապա դա որևէ կերպ չի վերաբերում այն միլիոնավոր մարդկանց, ովքեր գոհվել են այդ ճանապարհին⁵³:

Մյուս կողմից, ներկա սերունդը կարող է նաև բացասական ազդեցություն ունենալ հաջորդող սերունդների վրա՝ նրանց զրկելով որոշակի արժեքներից, իրավունքներից: Իրավունքի փոխտոփա Բ. Չիչերինը մեկ այլ աշխատանքում սերունդների փոխհարաբերությանը մոտենում է այլ տեսանկյունից. «Իրավաբանական անձը (տվյալ դեպքում հեղինակը նկատի ունի պետությանը), որպես մշտական հիմնարկ, ներառում է ոչ միայն ներկա, այլև ապագա սերունդների շահերը, մինչդեռ ներկա սերունդը կարող է թեթևամտորեն ոտնատակ տալ ապագան: Մարդիկ հաճախ նկատի են ունենում իրենց մոտակա շահը՝ գոհաբերելով հեռավորը: Օրինակ՝ համայնքը կարող է հատել նրան պատկանող անտառները՝ օգուտ ստանալով ներկա անդամների համար, սակայն վնասելով ապագա սերունդներին»⁵⁴:

(b) Ներկա սերունդն իրավունք չունի հաջորդող սերնդին զրկել արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքից

«Վերջինիայի իրավունքների մասին» 1776թ. Հռչակագրում, որն ընդունված է համարել մարդու իրավունքներն օրենսդրությամբ սահմանող առաջին փաստաթուղթը, նշված է. «Բոլոր մարդիկ, ըստ բնույթի, հավասարապես ազատ են և անկախ ու օժտված են որոշակի բնածին իրավունքներով: Նրանք չեն կարող, որևէ համաձայնագիր կնքելով, իրենց կամ իրենց հաջորդ սերունդներին զրկել այդ իրավունքներից»⁵⁵ : Ջեֆֆերսոնը նշում էր, որ յուրաքանչյուր սերունդ կարելի է դիտարկել որպես առանձին ժողովուրդ. Հաջորդ սերունդների նկատմամբ նա այլևս իրավունք չունի, ինչպես որ իրավունք չունի այլ երկրում ապրող բնակիչների նկատմամբ⁵⁶: Ֆրանսիայի 1793թ. Սահմանադրության 28-րդ կետի համաձայն՝ ժողովուրդը մշտապես պահպանում է իր սահմա-

⁵³ Чичерин Б. Н. Наука и религия. М.: «Республика», 1999. С. 183.

⁵⁴ Чичерин Б. Н. Общее государственное право. (Серия «Русское юридическое наследие»). Под ред. В. Л. Томсинова. М.: Зерцало. 2006. С. 390-391.

⁵⁵ Общая теория прав человека. Отв. ред. Е.А. Лукашева. М.: Норма, 1996. <http://lawdiss.org.ua/books/a1927.doc.html> (01.10.2017).

⁵⁶ Дубин Б. Поколение: социологические границы понятия. <http://polit.ru/article/2002/04/17/474861/> (10.10.2017).

նադրությունը վերանայելու, վերափոխելու և փոփոխելու իրավունքը: Որևէ սերունդ չի կարող ապագա սերունդներին ենթարկել իր օրենքներին⁵⁷: Այս մեջբերումներից բխում է, որ որևէ սերունդ իրավունք չունի Անկախության Սերնդին գրկել իր իրավունքներից: Եթե ներկա սերունդը (կոնկրետ տարածության և ժամանակի մեջ) հրաժարվել է իր որևէ իրավունքից, ապա իրավունքից հրաժարումը չպետք է տարածվի հաջորդող սերնդի վրա: Ներկա սերնդի կողմից իրավունքից հրաժարվելը ինքնին չի բացառում հաջորդող սերնդի՝ այդ իրավունքը վերականգնելու հնարավորությունը՝ Մահմանադրության, օրենսդրության մեջ փոփոխություններ նախատեսելով:

(c) Հայ հասարակության կառուցվածքում առկա փոփոխությունները

(1) Անկախության Սերունդը: Իմ խնդիրը չէ գիտական մեթոդաբանության գործադրմամբ քննարկել հայ հասարակության կառուցվածքը, սակայն այս հարցում կներկայացնեմ իմ անձնական դիտարկումները և նկատառումները:

Խորհրդային համակարգից նոր պետաիրավական համակարգ անցնելու փուլում սերունդների միջև առաջացավ խզվածություն: Բնութագրելով «վերափոխվող ժամանակակից ռուսական հասարակությունը», Ի. Իլինսկին պնդում է, որ այնտեղ ոչ թե սերունդների կոնֆլիկտ է, այլ սերունդների խզվածություն, որն արտացոլում է պատմական զարգացման խզվածությունը, հասարակության անցումն այլ տնտեսական, հասարակական-քաղաքական համակարգի: «Սերունդների խզվածությունը» բացատրվում է նրանով, որ «հայրերի սերունդը» հայտնվել է մի վիճակում, երբ նյութական և հոգևոր ժառանգությունը, որը զարգացման ժառանգորդության օրենքով պետք է փոխանցվի նրա հաջորդին, գործնականում մերժվել է: Սոցիալական արժեքները, որոնցով ապրում էր նախկին խորհրդային մարդը, նոր պատմական իրավիճակում մեծամասամբ կորցրել էր իր իմաստը և գործնական նշանակությունը, և դրա ուժով «երեխաների» կողմից չէր կարող այս ժառանգությունն ընդունվել, քանի որ դրանք ոչ ներկա, ոչ էլ ապագա կյանքի համար պիտանի չէին⁵⁸:

⁵⁷ Хрестоматия по всеобщей истории государства и права. Т. 2. Сост.: Батыр К.И. Под ред. Поликарпова Е.В. М.: Юристъ, 1996. С. 113.

⁵⁸ Молодежь России: Тенденции, перспективы. Под ред. И.М. Ильинского, А.В. Шаронова. М.: Молодая гвардия, 1993.

Հայաստանի անկախությունից հետո անցել է ավելի քան 25 տարի, և այդ ժամանակաշրջանում հասարակական կյանքում տեղի են ունեցել արմատական փոփոխություններ, գաղափարախոսական և արժեքային երբեմնի վակուումը վերացվել է որոշակի քաղաքական, մշակութային, սահմանադրական արժեքներով: 01.01.2017թ-ի դրությամբ ՀՀ բնակչության թիվը կազմում է 2.986.151 մարդ, որից 0-34 տարեկանները կազմում են 1.511.923 մարդ, այսինքն՝ ընդհանուրի 50.63%⁵⁹:

Անկախության Սերունդն իր սոցիալիզացիան անցել է իրավաքաղաքական այլ իրողություններում, իր դաստիարակությունը, կրթությունն ստացել է տեղեկատվական հասարակությանը հարմարեցված այլ ծրագրերի շրջանակներում:

Անկախության Սերնդի հասարակական գիտակցության վրա պակաս ազդեցություն չի ունեցել դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը, որտեղ զետեղված են՝ իրավունքի և պատասխանատվության, արդարության բարոյական և իրավական կողմերի, հանդուրժողականության, հավասարության, իշխանության, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, պետության սոցիալական քաղաքականության, քաղաքացիության և քաղաքացիականության, մարդու իրավունքների, իրավունքի հասկացության, տարբեր իրավունքի ճյուղերի, քաղաքական համակարգի և մի շարք այլ թեմաներ⁶⁰: Ինչքան էլ որ դժգոհեն կրթության որակից, միևնույնն է, դպրոցներում նման թեմաների լուսաբանումը չի կարող իր կնիքը չթողնել Անկախության Սերնդի վրա: Կրթությունը լուծում է ռազմավարական հարցեր, ուստի դրա արդյունքները դեռևս տեսանելի և շոշափելի կլինեն:

Բացի այդ, արդեն կարող ենք փաստել, որ ներկայիս հանրային ընկալման մեջ առավելապես մոդայիկ է ոչ թե կոռումպացված պաշտոնյայի և կասկածելի աղբյուրներից հարստացած դասախոսի կերպարը, այլն պրոֆեսիոնալ և ազնիվ պաշտոնատար անձի և դասախոսի կերպարը, ոչ թե շքեղ ավտոմեքնաներով և թիկնապահներով շրջապատված նախարարի, այլ՝ հեծանիվով երթնեկող փոխնախարարի

⁵⁹ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակի սեռատարիքային բաշխումն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի (ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով): <http://www.armstat.am/am/?nid=209/11.11.2017>.

⁶⁰ Հասարակագիտություն. 8-րդ դասարանի դասագիրք: Եր.: Տիգրան Մեծ, 2013, Հասարակագիտություն. 9-րդ դասարանի դասագիրք: Եր.: Տիգրան Մեծ, 2013, Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար: Տիգրան Մեծ, 2009, Հասարակագիտություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի համար: Տիգրան Մեծ, 2015:

կերպարը: Ներկայումս առավելապես բարձր պաշտոնների են նշանակվում ոչ թե «окружающая среда» բառը «շրջակա չորեքշաբթի» թարգմանող մարդիկ, այլև ազնիվ և պրոֆեսիոնալ մասնագետները: Օրինակ՝ դատական և իրավապահ համակարգում ազնիվ, պրոֆեսիոնալ և սկզբունքային պաշտոնատար անձանց համբավ ունեն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավագիտության դոկտոր Սերժիկ Ավետիսյանը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ, իրավագիտության թեկնածու Վազգեն Ռշտունին, Ավան և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի նախագահ Դավիթ Հարությունյանը, ՀՀ գլխավոր դատախազ, իրավագիտության թեկնածու Արթուր Դավթյանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետ, իրավագիտության թեկնածու Գեորգի Կուտոյանը և այլն: Այս թվարկումը իմ սուբյեկտիվ ընկալման արդյունքն է ...:

Իրավաքաղաքական ռեալիզմի տեսանկյունից չեմ կարող չնշել կենցաղային, սակայն մասսայական գիտակցությունն արտացոլող մեկ օրինակ: Հայ վարորդն արդեն սովորել է մեքենան վարել անվտանգության գոտին ամրացնելով, նա զիջում է հետիոտնին, իսկ հետիոտը սովորել է փողոցները հատել միայն նախատեսված անցումներով: Ճիշտ է, պարզունակ օրինակ է, սակայն կարևոր ցուցիչ՝ հասկանալու, որ մեր հանրային կյանքում և հասարակական գիտակցության մեջ տեղի են ունեցել և շարունակում են ունենալ որակական փոփոխություններ: Մենք նույնը չենք, ինչ նախկինում էինք: Ռոմանտիզմով չեմ տառապում և գիտակցում եմ, որ իրավունքի նկատմամբ հարգանքի, հասարակության մեջ իրավական համակարգի նկատմամբ վստահության ձևավորման հարցում դեռ անելիքները շատ են:

(2) Հայ-ռուսական, Ֆրանսիական և Ամերիկյան համալսարանների կրթությունը: Լեզուների իմացությունը չի կարող չազդել մարդու աշխարհայացքի ընդլայնման վրա: Կարծում եմ մասնագետները կհաստատեն, որ լեզվական տարբերությունները և բազմազանությունն իրենց կնիքը թողնում են մարդու գիտակցության և վարքագծի վրա: Ինչքան շատ լեզու գիտի մարդը, այնքան մեծ է նրա մշակութային պաշարը: Ասվածի համատեքստում պետք է փաստեմ, որ Անկախության տարիներին Հայաստանում հիմնադրվեցին Հայ-ռուսական, Ֆրանսիական և Ամերիկյան համալսարանները, որտեղ դասավանդում են ոչ միայն հայ մասնագետները, այլև համապատասխան պետություններից

հրավիրված դասախոսները: Մի շարք դասընթացներ դասախոսը ներկայացնում է ռուսերեն, ֆրանսերեն կամ անգլերեն: Նշված բուհերի ուսանողները մասնագիտական պրակտիկաներն անցնում են Ռուսաստանում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, շփվում են տեղի մասնագետների հետ, ծանոթանում են նրանց մասնագիտական վարքագծի կանոններին և այլն: Այս պետություններից հատկապես՝ ԱՄՆ-ում և Ֆրանսիայում իրավունքի նկատմամբ հասարակական լեգիտիմությունը ունի խորը պատմական արմատներ: Այս ամենը դրական է ազդում հայ մարդու գիտակցության վրա:

(3) Միրիահայերի ներգաղթը և նրանց օրինապաշտությունը: 2012 թվականից ի վեր Միրիայում տեղի ունեցող պատերազմի պատճառով շատ հայեր են տեղափոխվել ՀՀ: Ըստ ՀՀ Սփյուռքի նախարարության տրամադրած տվյալների՝ 2014 փետրվարի դրությամբ Հայաստանում բնակվում է շուրջ 11.000 սիրիահայ, մոտ 2.800 ընտանիք (տվյալները փոփոխական են և մոտավոր)⁶¹:

Մի քանի խոսք սիրիահայերի օրինապահ լինելու մասին: Հայերը մշտապես եղել են Միրիայի օրինապահ քաղաքացիներ և իրենց ներդրումն են ունեցել Միրիայի շատ ոլորտներում (մշակույթ, առևտուր, արտադրություն, նախագծում, արհեստներ և այլն): Միրիահայերի նկատմամբ թե՛ Միրիայի իշխանությունները, թե՛ հասարակությունը բարյացակամորեն են տրամադրված, ինչը պայմանավորված է հայերի վաստակով՝ նրանց վստահելի և օրինապահ վարքագծով, նաև էթնո-դավանական փոքրամասնությունների հարցում ներկա վարչակազմի հանդուրժողական քաղաքականությամբ⁶²: 1971թ. Միրիայի պաշտպանության նախարարի՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարին ուղղված նամակում, որտեղ հերքվում էին հայերին ուղղված այլ մեղադրանքները, նաև նշվում էր. «Մուրիոյ հայերը օրենքի սահմանին մեջ կ'ապրին եւ կը վայելեն կատարեալ ազատութիւն: Հայերը կրօնական գրգռութիւն չեն արծարծած եւ չեն կրնար արծարծել: Մուրիոյ մեջ, պատկան սպասարկութեանց կեցուածքը հայերու հանդէպ հինէն ի վեր շատ յստակ է.- տուրիահայերը օրինապահ քաղաքացիներ են այս

⁶¹ Հակոբյան Գ. Միրիահայերի սոցիալ-ժողովրդագրական ներուժը ՀՀ-ում: <http://iraber.asj-oa.am/6491/1/181.pdf> (05.11.2017).

⁶² Փաշայան Ա., Հարությունյան Լ. Միրիայի համայնքը. արդի հիմնախնդիրներ: Եր.: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2011, էջ 37, 63:

երկրին»⁶³ : Միրիահայերի կարգապահությունը և օրինապահությունը տեսանելի է նաև հայկական իրականության մեջ՝ նրանց հետ տարբեր ոլորտներում շփվելիս:

(d) Մի քանի խոսք քրեական վիճակագրության մասին

Ինչպես նշվեց, երդվյալ ատենակալների ինստիտուտը կարող է նախատեսվել որոշակի խումբ հանցագործությունների համար, օրինակ՝ այն հանցագործությունների, որոնց համար նախատեսված է ցմահ ազատազրկում: Այն անձինք, ովքեր մտահոգված են Մեր Երկրի փոքր լինելու գործոնով և երդվյալ ատենակալներ գտնելու բարդությամբ, ապա նրանց համար նշեմ, որ այդ տեսակի հանցագործությունների քանակը բավականին քիչ է: Այսպես՝ ՀՀ քր. օր-ում ցմահ ազատազրկում նախատեսված է 8 հանցակազմի համար՝ 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-14-րդ կետեր (ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն), 305-րդ հոդված (Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանությունը), 387-րդ հոդվածի 2-րդ մաս (Պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը), 388-րդ հոդվածի 2-րդ մաս (Ահաբեկչական գործողությունն օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի դեմ), 389-րդ հոդված (Միջազգային ահաբեկչությունը), 390-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասեր (Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ), 392-րդ հոդված (Մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները), 393-րդ հոդված (Յեղասպանությունը): 2016թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քննվել է 12 քրեական գործ, որից մեկով հանցագործություն կատարած անձն անհայտ է: 2017թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քննվել է 5 քրեական գործ, որից երկուսով հանցագործություն կատարած անձն անհայտ է: ՀՀ քրեական օրենսգրքի վերը նշված մյուս հոդվածներով նախատեսված հանցագործության դեպքեր, ըստ ՀՀ կառավարության 23.10.2008թ. 1225-Ն որոշմամբ հաստատված՝ 1Մ ձևի հաշվետվության, չեն արձանագրվել:

⁶³ Ղանալանյան Ս. Մփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին: Եր.: «Նորավանք» ԳԿԷ, 2016, էջ 131:

Կարծում եմ, որ այսքան փոքր թիվ կազմող քրեական գործերով մենք կկարողանանք Մեր՝ մոտ երեք միլիոնից բաղկացած բնակչությունից գտնել 6-12 արժանավորների, ովքեր պատիվ կունենան մասնակցելու արդարադատությանը:

ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկանը հարցազրույցներից մեկում նշել է. «Մահամանադրության մեջ երդվյալ ատենակալների ինստիտուտ նախատեսելու դեպքում, փորձնական կարգով, որոշակի ժամանակամիջոցով, օրենքով այն կարող է նախատեսել, օրինակ, այնպիսի հանցագործությունների քննության դեպքում, որոնց համար օրենքով նախատեսված է առավելագույն պատիժ: Այդպիսի հանցագործությունների թիվը բավականին փոքր է տարվա կտրվածքով, ուստի փորձարկման համար հնարավոր կլինի երդվյալների ինստիտուտը կիրառել այդ գործերով»⁶⁴: Դատավարագետի այս դատողությունն անկասկած հույսեր է արթնացնում, որ նրա դիրքորոշման մեջ հնարավոր են փոփոխություններ, իսկ նրա՝ փոփոխված դիրքորոշումն ապագայում կարող է նպաստել Անկախության Մերնդի՝ արդարադատությանը մասնակցելու՝ վիժեցված իրավունքի վերակենդանացմանը:

7. Երդվյալ ատենակալների ինստիտուտի վերածննդի սկիզբն ազդարարված է

(a) Մնայուն է քրտնաջան աշխատանքով ձեռքբերված իրավունքը

Մարդու ոչ մի իրավունք հենց այնպես չի ճանաչվում կամ չի տրվում, այն երկարատև պայքարի արդյունք է: 19-րդ դարի գերմանացի հայտնի իրավաբան Ռուդոլֆ Ֆոն-Իերինգը «Պայքար իրավունքի համար» աշխատանքում նշում է. «Արդյոք իրավունքները ժողովրդին պետք է ընձեռվի առանց նրա ջանքերի, թե՞ նա պետք է իրավունքը ձեռք բերելու համար լարի իր ուժերը և վիճի, պայքարի և իր արյունը զոհաբերի. հենց այս հանգամանքն է ժողովրդի և նրա իրավունքների միջև ստեղծում այն ներքին կապը, ինչ որ ստեղծվում է ծննդաբերող մոր, ով վտանգում է իր կյանքը, և երեխայի միջև: Առանց որևէ ջանքի ձեռք բերված իրավունքը կարելի է համեմատել արագիլի բերած երեխայի հետ: Այն ինչ արագիլն է բերել, նա էլ կարող է վերցնել: Սակայն երեխային ծննդաբերած մայրը

⁶⁴Ղազինյան Գ. Դատական երկաստիճան համակարգի ձևավորումն այլընտրանքային լուծումներից մեկն է: 10/07/2014: <https://168.am/2014/07/10/386265.html> (06.11.2017).

թույլ չի տա իր երեխային առևանգել: Նույն կերպ ժողովուրդը թույլ չի տա, որ իրենից վերցնեն իր իրավունքը, որին նա հասել է արյունալի աշխատանքի միջոցով: Կարելի է խիզախորեն պնդել, որ այն սիրո էներգիան, որով ժողովուրդը հավատարիմ է իր իրավունքին, որոշվում է աշխատանքի և լարվածության քանակով⁶⁵: Ռ. Իերինգը մեկ այլ աշխատանքում նշում է. «Ժողովուրդը, ով իրավունքը դիտում է որպես իր գոյության պայման, իսկ այդ իրավունքի նկատմամբ վիրավորանքը որպես իրեն հասցված մահացու անարգանք, ապա այդ ժողովրդից անկասկած կարելի է սպասել, որ նա պաշտպան կգանգնի իր իրավունքին»⁶⁶:

Անկախության Սերունդը պետք է գիտակցի, որ արդարադատությանը մասնակցելու իրավունքի պետական ճանաչումը բարդ գործընթաց է, որը պահանջելու է քրտնաջան և հետևողական աշխատանք: Անկախության Սերնդին՝ իրավունքի պայքարի համար տրվել է նոր բացառիկ իրավական հնարավորություն: 2015թ. փոփոխություններով Սահմանադրության մեջ նախատեսված է քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը⁶⁷:

(b) Քաղաքացիական նախաձեռնությունը երդվյալ ատենակալների ինստիտուտի վերածննդի սահմանադրական խողովակ

ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք: Սահմանադրության 204-րդ հոդվածի համաձայն՝ Եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ վաթսու

⁶⁵ Иеринг Р. фон. Борьба за право. С.-Пб. Изд. Вестника знания, перевод В. И. Лойко, 17-е изд. 1912. С. 21.

⁶⁶Иеринг Р. фон. Цель в праве. Том первый.С.-Пб.: Изд. Н.В. Муравьева. 1881. С. 278.

⁶⁷ ՀՀ Սահմանադրության մեջ երդվյալ ատենակալների մասին դրույթի բացակայությունը per se չի բացառում ընթացիկ օրենսդրությամբ նման ինստիտուտ նախատեսելու հնարավորությունը: Ավելին՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ժողովուրդը, դատական իշխանությունը, որը նույնպես պատկանում է իրեն, կարող է իրականացնել երդվյալ ատենակալների միջոցով:

օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Թեև քաղաքացիական նախաձեռնության կարգը խիստ բարդ է (հիսուն հազար քաղաքացու ձայն, Ազգային ժողովի մերժելու դեպքում վաթսուն օրվա ընթացքում, ևս երեք հարյուր հազար քաղաքացու ձայն, նախնական սահմանադրական վերահսկողություն), իրավունքի համար պայքարը նույնպես բարդ ու քրտնաջան աշխատանք է:

Վստահ եմ, Անկախության Մերունդ, Ձեզ՝ հաջողվելու է ...

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ